

2425

3283

28
U-12

1910

2475

2
3
4
5
6
7
8
9
10
11
12
13
14
15
16
17
18
19
20
21
22
23
24
25
26
27
28
29
30
31

2010

Ч 04

8'001

200
373 - ԱԿ
28
Ս-19
ԱԿ

ՊՐՕՖ. Ն. ՍԱԳԱՐԴԱ

200
373 - ԱԿ

ՅՈՅՆ-ԱՐԵՒԵԼՔԻ ՀԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ

ԻԻՐ ԾԱՂԿՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (IV-V ԴՐ.)

ՆՐԱ ԳԼԽԱՀԻՈՐ ՈՒՂՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԵՒ

ԲՆՈՐՈՇ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1004
(1931)

19949-59



Ուսու. քարգմ.

ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՄԲԱՏԵԱՆ

Վ. Ա. Վ. Ա. Ռ Շ Ա. Պ Ա. Տ

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

1910

ՄԱԿԱՐԱԳ-ՄԻ-ԲԱՐԱԳ-ՑՈՒ-ՑՈՒ
ԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՏԱՐԱՎԱՐԱՎԱՐՈՒՄ

ՀԱ 7-71 ՄԱԿԱՐԱԳ ԺԱՄԱՐԱԳ ԴԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԱՐԱՏԻ ԱՐԱՐԱՏԻ ԱՐԱՐԱՏԻ

44

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԱՐԱՏԻ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԱՐԱՏԻ ԱՐԱՐԱՏԻ

— 44 —

Արագ արագ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԱՐԱՏԻ

— 44 —

ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ա հանձնվել Ա հանձնվել պատմական

Օ 1 Զ 1



ՑՈՒՆ-ԱՐԵԽԵԼՔԻ ՀԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՍՏՈՒԾԱԲԱՆԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԻՒՐ ԽԱՂԿԱՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (IV-V դր.),—ՆՐԱ
ԳԼԽԱԽՈՐ ՈՒՂՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ԲՆՈՐՈՇ ՑԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Անգհանութ եկեղեցւոյ պատմութեան մէջ IV-րդ դարը
և V-րդի առաջին կեսը իրենց նշանակութեամբ վերին աստի-
ճանի մի հետաքրքիք շրջան են ներկայացնու մ: Յոյն-հռովմէտական
կայսրութեան քրիստոնէութեան արտաքին գրութեան մէջ
առաջ եկած հիմնական փոփոխութիւնը՝ եկեղեցւոյ ներքին
կեանքի համար ամենաբարեյաջող հետևանքներն ունեցաւ, լիա-
կատար հնարաւորութիւն տալով նրա անդ ամներին հոգւոյ բոլոր
ոյժերը եկեղեցւոյ ներքին հարցերի լուծման վերայ կենզրոնացնե-
լու: Գոյութեան համար մզած արտաքին կոփւները չկարողացան
նրան ջլատել և եկեղեցին ոկնեց լիակատար կեանքով ապօել:
Բայց, հակառակ բոլոր յոյսերի, որ հալածանքի միւազի անյայտա-
նալովը եկեղեցւոյ հանգիստ կեանքը և խաղաղութիւնը այլ ևս
չեն խանգարուի՝ երեաց, որ կոկապէս նշանաւոր և էտկան
կոփւը նոր է սկսում, ուստի և նոր ժամանակը իրաւամբ մեծ
վէճերի շրջան անունն ուտացաւ: Դրանք նախորդ աստուածա-
բանական մտքի աշխատանքի բնական շաբունակութիւնն էին,
իսկ լայն, նոյն իսկ նրանց խիստ զարգացումը—ներքին ան-
հրաժեշտութիւն, երբ ազատ հանդէս եկան, բացուեցին և ընդ-
հարուեցին էտկան և ձևական տարածայնութիւնները, որոնք
քրիստոնէական աշխարհի զանազան մասերում նախկին դա-
րաշրջանի ընթացքում կազմակերպուել էին: Կռիւը յառաջ
կոչեց իւր արդիւնաւորութեամբ և առանձնայտակութեամբ
լարուած, վերին աստիճանի ուժգին, կենդանի և կարող շար-
ժումն աստուածաբանական մտքի, որ ունեցաւ բազմատեսակ
ստեղծագործող գործունէութիւն: Քրիստոնէական հանձարը
առանձին ոյժով երեան է գտիս աստուածաբանական գիտու-
թեան զանազան միւլերի մէջ, գլխաւորապէս քրիստոնէու-
թեան բուն էութեան վերայ կենդրոնանալով: Յոյն ժամանակի
աստուածաբանական երկերը ուղեցոյց են ծառայում ընդհա-
նուր քրիստոնէութեան յաջորդ սերունդների համար: Նրանց

մեծ հեղինակները, որոնք հաւատացեալներին ճշմարտութեան մէջ էին կրթում, գլխաւորապէս «Եկեղեցւոյ Հայրեր» անուն ստացան: Նրանց աստուածաբանական աշխատանքների եղբակացութեանց վերայ էր հիմնուում մերձակայ շըջանի աստուածաբանական միտքը, մինչև այսօր դրանցով էլ ապրում է նա այն համոզմամբ, թէ այդ ժամանակ առաջ եկան և լուծուեցին այն բոլոր էտական տարրերը, որ մարդկութիւնը կարող է տալ քրիստոնէութեանը: Այս շըջանի հետ, որ կլաստիկ նշանակութիւն է ստացել, եկեղեցւոյ պատմութեան մէջ ոչ մէ շըջան համեմատուել չե կարող: Ուստի, շատ բնական է այս շըջանի աստուածաբանական աշխատանքով հետաքրքրուելու ձգտումը, և անպայման նըա կտընոր նիւթական բովանդակութիւնից զատ նաև այն ճանապարհների որոշելը, որով ընթանում էին աստուածաբանական միտքը, աղբեւըները և միջոցները, ոստնցից նա օդտւում է այդպիսի փառաւոր հետեանքերի հասնելու համար, հաւատաբապէս և այն բարեյածող պայմանները, որոնցից նա ոյժ էր ստանում իւր զարդացման համար: Այս հարցերը ոչ միայն պատմական, այլ և խորին գիտական, գործնական նշանակութիւն ունեն, ինչպէս բացառապէս այդ շըջանի կարեւոր լինելու պատճառով, նոյնպէս և աստուածաբանական գիտութիւնների մասն եղած մեր ժամանակակից հարցե և նրանից սպասելիք պահանջների պատճառով:



Վահագուստ է բանտառից ուժի և աւելցնող ուժը ու գոյնութիւնների ու տանը սծուն ուժի ամենալավ մարդ ու աւագ է ունենալու աշխատանք առաջականացնելու ուժը: Ա. Ե. Ե. և այլ աշխատանք առաջականացնելու ուժը: Ա. Ի. կամ կայացնելու ուժը:

Եկեղեցական—աստուածաբանական կեանքի ընդհանուր բնաւորութիւնը IV—V դարերում Եկեղ.—աստուածաբանական գիտութիւնը նախ քան Նիկիական շրջանը: Զատագոլների աստուածաբանական գործունէութիւնը II. դարում: Ա. Իրինէոսի Փոքր — Ասիայի աստուածաբանութիւնը: Գրտական—աստուածաբանական շարժումն քրիստոնէական աշխարի գանազան մասերում եւ Եկեղեցւոյ ներքին խնդիրների լուծման կարիքը: Որողինէս: — Նրա աստուածաբանական գործունէութեան բնաւորութիւնը եւ Աղքասանդրեան զպրոցի ուղղութիւնը: Հոսանքներ Աղքասանդրեան զպրոցի մէջ Որողինէսից յետոյ: Փոքր - Ասիայի աստուածաբանութիւնը IV-րդ դարի սկզբին, Ա. Մեթոդիոս Ուիմպիացին, Անտիոքի զպրոցը:

Երբ մի հայեացք ենք ձգում յոյն-արեւելքի IV և V դարերեւ Եկեղեցական—պատմական կեանքի ներքեն շարժումների և գէպքերի ընթացքի վերայ, ամենից առաջ աչքի է ընկնում այն փաստը, որ այդ ժամանակ ամբողջ Եկեղեւուոյ գործը քրիստոնէական գաւանութեան մեծ հարցեն էին կազմում: կենքանի հետաքրքրութիւնը ցոյց էին տալիս ոչ միայն Եպիսկոպոսները և ընդհանրապէս իրենց կոչմամբ և կրթութեամբ գրանց լուծման համար կոչուած անձինք, այլ և ժամանակակից հասարակութիւնները մինչև ստորին դասակարգք: Ոչ միայն ժամանակակից քաղաքակրթութեան կենցընները, ոչ միայն քրիստոնէական կրթութեան և Եկեղեցւոյ կեանքի կենցընները, այլ և աննշան հատուածները համահաւասար իրենց իրաւունք և պարտականութիւն էին համարում ընդհանուր գործի մէջ մասնակցելը: Մեծ քանակութեամբ մասնակցողների անթիւ ժողովները, որոնք հաւանում էին հաւատոյ դաւանութեան մի որոշ ձեւը, մերժում ուրիշները, կազմում նորեքը, դատապարտում էին ուրիշներին, ապստամբում Եպիսկոպոսների գէմ, որոնք այս կամ այն հաւատոյ հանգանակն էին ընդունել, որի մէջ Ենթադրեալ կղերականները և աշխարհականները հաւատից հեռանալ էին տեսնում, գաւանաբանական սկզբունքների պատճառով բաժանումն հատուածների մէջ,— այս բոլոր բաւականաշափի պայմացոյց են այն բանի, թէ աստուածաբանական

հարցերը ի՞նչպէս զբաղեցնում էին քրիստոնեայ հասարակութեանը: Ամեն բան շարժման մէջ էր, ամեն տեղ վիճում էին, ամենը յուղուած էին Եւ գժուար չէ նկատել, որ աստուածաբանական մտքի զանազան ուղղութեան կռիւ էր այս, աստուածաբանական զանազան դպրոցների՝ իրենց որոշ եկեղեցական և աստուածաբանական — վիճասովիայական աւանդութիւններով և գաւանաբանական սկզբունքների բանալու և շինելու գիտական մեթոդներով, և Երեն յատուկ բանաձեռով: Ինքն ըստ լիքեան հասկանալի է, որ բնազանցական խընդիրների գժուարութեան պատճառով, որոնց վերայ յենուում էր փորձող միտքը, համեմատաբար միայն քչերը կաթողացան անկախ և միանդամայն տերել նրանց և առաւել և գրականապէս նրանց մշակելու ընդունակ էին: Ուստի և աստուածաբանական զանազան ուղղութիւններ արտայայտութիւն գտան միայն մի քանի աչքի ընկող անձնաւորութեանց երկերի մէջ, — նրանց երկերը հանդիսանում են միակ աղքեւը աստուածաբանական մտքի հետզհետէ զարդացումը հասկանալու համար: Սակայն պէտք է յշշել: որ այս գործողների նշանակութիւնը և յաջողութիւնը հետևանք էր այն բանի, որ նրանք ամբողջ հոսանքների արտայացտիչ էին հանդիսանում, — նրանց հետեւում էին շատ թէ քիչ կուսակիցներ և համախոհներ, որոնց անունները հանդէս են գալիս միանդամայն պատահաբար, այն էլ գլխաւորապէս ժողովների մէջ:

Խաղկման շրջանի աստուածաբանական գիտութիւնը, ինչպէս և այդ շրջանի ամբողջ եկեղեցական կեանքը, ստեղծում էր և զարդանում այն հիման վերայ, ինչ որ նախորդ գարեշում կատարուած էր: Այժմ հարուստ հունձ էր հաւաքած, որի առատ ցանքը, թէ ոչ բարեյաջող արտաքին պայմաններում, կատարուած էր առաջ: Եկեղեցւոյ արտաքին զրութեան մէջ տուաջ եկած գոփիսութիւնը չդաւաճանեց նրա ներքին էութեանը, — նա միայն բարեյաջող հանդամանքներ առաջ բերեց և հնարաւորութիւն տուեց լիակատար, ամենատեսակ և պարզ կերպով յայտնագործել, բանալ, և որոշ չափով կատարեալ գարձնել այն շարժումները, որոնք ծագել էին և ալլում էին Երա մէջ մինչեւ այդ ժամանակը: Ուստի և, ինչպէս եկեղեցւոյ ամբողջ ներքին կեանքը, նոյնպէս և աստուածաբանական մտքի ամբողջ ներքին կեանքը, աստուածաբանական մտքի զարդացումն քննելի շրջանում, որոնց վերաբերութիւնը միշտ է աւելի կամ պակաս ուղեղ գիտութեան մօտեցնել: Այս ընդհանուր օրէնքը քրիստոնէութեան նկատմամբ այն մէծ նշանակութիւնն ունի, որ այստեղ ինչիքը անձնական բարձր և խորին շահերին է վերաբերում, որտեղ մարդու համար նոր կեանք, նոր աշխարհ է սկսում: Քրիստոնեան զբան հասնելու համար պէտք է մտքով իւր հաւատի բովանդակութեան մէջ մտնի, և նրան զարդացման ամենամանը աստիճանների վերածէ, հասկանայ, համաձայնացնէ քրիստոնէական գիտակցութիւնը իրենի հետ, քննէ կրօնական փորձառութեան յարաբերութիւնը միւս փորձառութիւնների նկատմամբ, հաւատի բովանդակութիւնը միւս սոլոր գիտութիւնների հետ յարաբերութեան մէջ գնէ — մի խօսքով հաշիւ տայ իւր հաւատի համար: Այստեղ չպէտք է տեսնել պարզ հետաքրքրութիւն, որ փնտում է աւելին քան ունի, և կամ սեպհական անվատահութիւն և ներքին կասկած ընդունած հաւատի նկատ-

մատուածաբանական մտածմունքի անհրաժեշտութիւնը

քրիստոնէական հաւատի գրական ըովանդակութեան նկատմամբ գրուած է ինչպէս հէսց քրիստոնէութեան, նոյնպէս և մարդկային հոգու էութեան մէջ: Եթէ քրիստոնէութիւնը նոր կեանքի սկզբն է, աշխարհը վերանորոգող բարոյական — կըօնական ոյժ է, մարդկութեան մէջ նոր կեանք ստեղծող, այն ժամանակ այս նոր կեանքը իսկապէս կարող է առաջ գալ միայն կրօնական փորձառութեանը համեմատ մարդու Աստուծոյ հետ ունեցած յարաբերութեան մէջ էական գոփիսութեան գիտակցութեան պայմանով, — այսինքն Քրիստոսով վերականգնուածան գաւակցութեան, ոը և կազմում է նոր կեանքի կենտրոնը: Այս գիտակցութեամբ փըրկուած մարդու համար վիայում էր նոր լոյս, ճշմարտութեան ճանաչումն, որը ոչ միայն ընդայնեց և հարստացրեց, այլ և մարդկայինի և առոտուածայինի մասին եղած մարդու մտքի նախկին կարգը միանդամայն կերպարանափոխեց: Այս լոյսը ստեղծում է և հաստատում մարդու մէջ նոր գիտակցութիւն և ճշմարտութեան հասկացողութիւն այն չափով, որչափով որ նա մարդու հոգուն հաղորդում էր իւր փրկարար բովանդակութիւնը: Սակայն գրան հասնում է մարդ այն ճանապահուածի որ գիտակցութիւնը է հաստատում մէջ նոր գիտակցութիւնը է այն, բացարձում, հասկանում: Այդպիսով, հաւատը ներփակելով իւր մէջ գիտութիւնը, պատճառ է լինում աւելի խորը թափանցելու նրա մէջ, ոչ թէ միայն խոստովանել, այլ և գիտենալ: Միւս կողմէց, մարդկային հոգուոյ էութեան մէջ պահանջ կայ բոլորը, ինչ որ նրա երկակայութեան, ըմբռնման, փորձի առարկայ է կազմում, իւրացնել մատաղողութեան միջոցով և աւելի կամ պակաս ուղեղ գիտութեան մօտեցնել: Այս ընդհանուր օրէնքը քրիստոնէութեան նկատմամբ այն մէծ նշանակութիւնն ունի, որ այստեղ ինչիքը անձնական բարձր և խորին շահերին է վերաբերում, որտեղ մարդու համար նոր կեանք, նոր աշխարհ է սկսում: Քրիստոնեան զբան զբան հասնելու համար պէտք է մտքով իւր հաւատի բովանդակութեան մէջ մտնի, և նրան զարդացման ամենամանը աստիճանների վերածէ, հասկանայ, համաձայնացնէ քրիստոնէական գիտակցութիւնը իրենի հետ, քննէ կրօնական փորձառութեան յարաբերութիւնը միւս փորձառութիւնների նկատմամբ, հաւատի բովանդակութիւնը միւս սոլոր գիտութիւնների հետ յարաբերութեան մէջ գնէ — մի խօսքով հաշիւ տայ իւր հաւատի համար: Այստեղ չպէտք է տեսնել պարզ հետաքրքրութիւն, որ փնտում է աւելին քան ունի, և կամ սեպհական անվատահութիւն և ներքին կասկած ընդունած հաւատի նկատ-

մամբ,—ընդհակառակը, այստեղ արտայայտում է հաստատուն համոզումն, որ քրիստոնէական վարդապետութիւնը, ինչպէս երօք աստուածային ճշմարտութիւն, կարող է և պէտք է արդարանայ հոգով ճանաչողների առաջ: Այդ ժամանակ հաւատը բարձրանում է ինքնագիտակցութեան, սեպհական համոզման աստիճանին, իսկ դրա համար ոչ միայն կրօնական փորձառութիւն է հարկաւոր, այլ և միտք և հետախուզութիւն: Եւ աստուածային խօսքը, եթէ ոչ բացառապէս, գունեա գլխաւորապէս մարդկային դատողութեանն է դառնում և առիթ է տալիս ևս առաւել խորապէս թափանցելու նրա մէջ*:

Աւելի մեծ աստիճանով հաւատը գիտութեանը մօտեցնելու այս պահանջն ու դրդումն է պահանջւում ամբողջ եկեղեցուց քան իւրաքանչիւր քրիստոնէայից: Եկեղեցին իրեք պէտք է իրեն ճանաչէր, Աստուծոյ փրկարար միտքը իրեն սեպհական դարձնէր, որպէս զի ճշմարտապէս տերէր նրան. Աստուածային գանձը, որ եկեղեցուն էր հաւատացած, մեռած գանձ մնալ չէր կարող, նա իւր ներքին պահանջի համեմատ հրաւերում է իւր դաւանանքի հիմքերը ճանաչելու: Այս անհրաժեշտութիւնը ոյժ էր ստանում նաև եկեղեցոյ կոչումով. Նա պարտաւոր էր ազգերին հրաւերել խաչի մօտ և նրանց հաւատի մէջ կրթել: Սակայն այս կոչման իրագործումը եկեղեցոյ համար մի այլ լինդէր ունէր—տալ հաւատի բովանդակութեանը որոշ, կենդանի արտայայտութիւն: Եկեղեցին ոչ միայն պէտք է ամէր, որ նա հաւատում է, այլ և թէ ինչի՞ է հաւատում, ի՞նչ բովանդակութիւն և միտք ունին իրեն հաւատացած Յայտնութեան ճշմարտութիւնները, և պէտք է այն ձեռվ ամէր, որ այդ հասկանակի, շօշափելի և ըմբռնելի լինէր ինչպէս նորահաւատների այնպէս էլ իսկական անդամների համար,—միայն այս ձեռվ հնարաւոր է արտաքուստ և ներքուստ ինքնակառուցումն եկեղեցոյ: Այդ բոլորը կարելի էր ձեռք բերել մտքի, հետախուզութեան և գիտութեան միջոցով: Այստեղ են գանում այն հիմքերը, թէ ինչո՞ւ քրիստոնէութեան բովանդակութիւնը հէնց երեան դալու օրից մարդկային միտքը քննութեան առարկաց է դարձնում և ինչո՞ւ եկեղեցին առաքեալների ժամանակից առաջ եկեղեցական գիտութիւնը չէր:

* Հմմտ. Thomasius D., Die christliche Dogmengeschichte als Entwicklungs—Geschichte des kirchlichen Lehrbegriffs. 2. Aufl. I. Bd. Erlangen 1886 S. 1—7.

ըող որոշել այն ժամանակը, երբ հիմք է զրուել և էական տարբեր են գոյացել այն բանի, ինչ որ ընդունուած է իսկական մտքով աստուածաբանական գիտութիւն անուանել, և թէ ի՞նչպէս և լի՞նչպիսի հանդամանքներում քրիստոնէաների մէջ մուտք է գործել «կեղծանուն գիտութիւնը»: Դրանով միայն կարելի է բացատրել այն փաստը, որ երբ, եկեղեցւոյ ներքին անհրաժեշտ պատմական զրութեան ոյժով աստուածաբանական մտքի աշխատանքը պէտք է ցոյց տար վերին աստիճանի լարուածութիւն, այն ժամանակի, որքան որ մինչ այդ պահպանուած պատմական յիշատակարանների և տեղեկութիւնների հիման վերաց դատել կարելի էր, երեաց, որ նա շատ ջուտով ցոյց տուեց բաւականաչափ բաղմակողմանի շահներ և շարժումն, բազմատեսակութիւնն ձգ տումների, որոնց մէջ արտայայտութիւնն գտան ժամանակի գործնական պահանջներին համապատասխան եկեղեցական կեանքի և մասնաւորապէս աստուածաբանական մտքի, ներքին գարգացման զանազան հոսանքներ:

Քրիստոնէութեան կոչման շահները յունա-հռովմէական աշխարհում և վերջինիս յարաբերութիւնը գէպի քրիստոնէութիւնը եկեղեցւոյ գոյութեան հէնց առաջին շրջանում կեանքի կոչեցին աստուածաբանական մտքի նշանաւոր յայտնութիւններից մէկը, համարձակ կերպով հարցը գնելով հեթանոս փիլիսոփայութեան, նորա համկացողութեան և լեզուի յարաբերութեան նկատմամք, որպէս միջոց քրիստոնէութեան վարդապէտութեան բացատրութեան: Քրիստոնէութիւնը, —որ ամենից առաջ քարոզուեց Յուդայի լեռներում և Գալիլեայի ծովի ափին ժողովրդից եկած մարդկանց, հրէայ ձկնորսների և արհեստաւորների միջոցով, —տարածուեց աշխահի մէջ, որ արդէն յդիացած էր յունական կրթութեամբ: Միջերկրական ծովը շրջապատող երկներում, հին քաղաքակրթութեան կենսառնական կէտերում երեան եկան քրիստոնէական համայնքներ, սրոնց անդամներն էին ոչ միայն պարզասիրտները և ճորտերը, այլ և ամենատեսակ կոչման և կրթութեան տէր մարդկէ: Այսպէս, անխուսափելի կերպով նոր վարդապէտութիւնը բազմահետակ մասնակցութեան մէջ մտաւ կրթութեան հին տարրերի հետ, որոնցով տոդորուած էր հասարակութեան բարձր դասակարգի գաստիարակութիւնն ու կրթութիւնը և ամբողջ հասարակական կեանքը: Հարկաւոր էր հող գտնել, որի վերաց կարելի լինէր վերականգնել փոխադարձ հասկացողութիւն կրթուած հեթանոսների և նոր կրօնի հաւատացեալների մէջ: Այսայտք միշտ կարելի է յայտնիով բացատրել: Յայտնութիւնը նոր լեզու շտեղծեց, նա օդառւեց լեզուի գրական

ձեռով, որպէս զի դրանցով կշռէ նոր ճըմարտութեւնները և նոր հիմք գնէ բարդյական կետնքի: Նա առանձին անըմիններին և հասկացողութեանց տալիս էր նոր, աւելի խորիս և ամ-ըողջ միտք, լուսաւորելով և թափանցելով նրանց կրօնական աշ-խարհաճայցողութեան մէջ նոր լրջութիւն: Եւ քիչառնէական վար-դապետութեան արդիւնաւէտ բովանդակութեան իւրացուցման համար ուրիշ ճանապարհ չկար. անհրաժեշտ էր հիմքի մէջ դնել գործառնութեան մէջ եղած հասկացութեւնները և նրանց կապակցութեւնները, որոնք ամուր կերպով հաստա-տեցին տերմինաբանութեւնը: Որպէս զի քրիստոնէութեան ճշմարտութեանց համար մատչելիութեւն ստեղծուի կրթեալ շշանների գաղափարների տշխարհում, բնական և յուստալի մի-ջոց գրա համար կարող էր միայն յունական փիլիսոփայութեւնը վինել, որ եւր կնելով էր գրել յոյն—հռովմէական հասարակու-թեան մտքերի ամբողջ կադմութեան վերաց: Հէնց այս միջո-ցին դիմեցին քրիստոնէութեան Զատագովները Ա. Յուստիֆանոսի գլխաւորութեամբ:

Իրենք Զատագովները մեծ մասամբ հեթանոսական կրթու-թեւն էին ստացել և հեթանոսական փիլիսոփայութեան միջով ~~անցու~~: Նրանք այդանու ճշմարտութեւն չգտան այլ միայն ու-սումնատիրեցին քննութեան եղանակներ և ձեռք, որոնք գոր-ծածական էին ժամանակակից գիտութեան մէջ: Նրանք հին աշ-խարհի գիտական քննութեան հետեւնքներին բացարձակ արժեք շվերագրեցին, բայց հնարաւորութեւն ստացան միւնիյն ժա-մանակ, բաժանել նրանցից ընդհանուր մարդկային ճշմարտու-թեւնների հետեւնքները: Եւ որ ամենակարնորն է, նրանք գիտէին ժամանակակից կրթեալ հասարակութեան կրօնական—միլիսոփայական պահանջները, որ ծարաւ էր, Աստուծոյ մասին եղած բոլոր գաղափարների լրականութեան, ինչ-պէս հոգեոր էտէի, բարոյական օրէնքի, անմահութեան և հանդերձեալ կեանքում վարձատրութեան վկայութեան և հաստատութեան համար, որ խոստանում էր աիրաւ-պետող կըօնական փիլիսոփայութեւնը: Զատագովները քրիս-տոնէական վարդապետութեան ընդհանուր միութեան այս կու ճշմարտութեւններն են բանում հեթանոս հասարակու-թեան ուռաջ ժամանակակից կրթութեան և զարգացման մտածողութեան հասկացողութեւնների և ձեռքի մէջ, ապացու-ցելով, որ պարզ վարդապետութեան մէջ է գտնուում ամեն բան, ինչ որ վիտրում է ճշմարդիտ փիլիսոփայութեւնը*. միայն այդ է յուսալի և օգտակար փիլիսոփայութեւն, բովանդակու-

* св. Густина, діалогъ съ Трифономъ VIII. 1.

թեամբ մաքուր և վրեմ ու ճագմամբ աստուածային, նա է միայն կրօնապէսազատիչ և վերանորոգիչ ճշմարտութեւն բերում: Այն հիմքը, որի վերայ զարդացաւ Զատագովների աստուածաբանու-թեւնը, հաւատի անձնութիւն վարդապետութիւնն էր, ինչպէս որ քարոզում և պահպանում էր եկեղեցու մէջ, որի ճշմարտու-թեան մէջ իրենք անպայման համոզուած էին: Նրանք Գնոստի-կեանների նման չէին ձգտում յեղափոխել քրիստոնէութեւնը: Նրա գրական բովանդակութիւնը չէին յարմարեցնում աւտոնմա-յատուկ բանական փիլիսոփայութեան երեւակայական թէօրիա-ներին: Սյոպէս, Բ. գալիք քրիստոնէայ Զատագովները իրենց եր-կերի մէջ փորձ արին հեղենական կրօնական փիլիսոփայութեան սկզբունքները քրիստոնէական վարդապետութեանը յարմարե-ցնելու, որով և հիմք գրուեց եկեղեցական աստուածաբանու-թեան՝ ինչպէս գիտութեան, որ ործադրում էր կրասիկ քա-ղաքակրթութեան հասկացողութեամբ: Իւր սկզբնական ձեռք ջատագովների գրականութիւնը արգիւնք էր անցողական զը-րութեան, կռուեի, որը վաղ թէ ուշ պիտի վճառւէր, իսկ այդ կռուով իւր վախճանը գտաւ նաև գրականսովիփայտական ձկը. բայց աւելի կարեսը էր այն, որ եկեղեցին, չնայելով Զա-տագովների աստուածաբանութեան շատ պակասութիւններին, բարձր գնահատեց նըանց ծառայութիւնները և գսանով ճա-նաչեց նրանց աստուածաբանական գրականութիւնը առ կախ թողեց այն հարցը թէ, միայն արտաքին աշխարհի նկատմամբ պէտք էր եկեղեցւոյ զպօրութեան մէջ յարմարեցներ կրասիկ գրականութեան և փիլիսոփայութեան ձեռքը թէ և եկեղեցա-կան ներքին հարցեր վճռելու ժամանակ:

Աստուածաբանական մտքի մի այլ ուղղութեւն յառաջ եկաւ և հաստատուեց եկեղեցւոյ մէջ Գնոստիկեանների դէմ մղած կախների պստիճանաբար զարդացմամբ, որի մէջ ներ-կայացլու նրանցից այն բոլորը, ինչ որ իւր կարծիքներին և տեսութիւններին չէր համաձայնուում: Գնոստիկեանների տե-սութիւնների մէջ արտայայտութեւն գտած օգումները գրա-ւում էին նաև եկեղեցւոյ համար հոգացող շատ քրիստոնէաննե-րին: Դրանով զօրեղանում էր Գնոստիկեաննութեան վնասակա-

* Գնոստիկանութիւնը առաջին անգամ գիտական քննա-գատութեան ենթարկեց քրիստոնէական աւանդութեւնը և քրիստոնէական վարդապետութեան գրաւոր աղբեւըները, հե-ռացնելով նրանցից այն բոլորը, ինչ որ իւր կարծիքներին և տեսութիւններին չէր համաձայնուում: Գնոստիկեանների տե-սութիւնների մէջ արտայայտութեւն գտած օգումները գրա-ւում էին նաև եկեղեցւոյ համար հոգացող շատ քրիստոնէաննե-րին: Դրանով զօրեղանում էր Գնոստիկեաննութեան վնասակա-

ропуթбւնը և որոշ չափով որոշւռում էր նրա հետ եկեղեցւոյ հայրերի կոռուի բնաւորութիւնը: Կովուը սամիպեց եկեղեցուն բաց անել իւր սեպհականութիւնը և տեսականապէս հիմնել այն: Եթէ քրիստոնէութեան հոգեսոր խորին հասկացողութեան առաջ, որը պահանջում էր գնոստիքականութիւնը, եկեղեցւոյ հաւատը ողորմելի և սահմանափակ էր թւում, այն ժամանակ անհրաժեշտ էր Գնոստիկեանների սիստեմների հանդէպ դնել համազօր տեսական գրութիւն: Եկեղեցական աստուածաբանաւկան միտքը պէտք է պարզ և որոշ սահմանէր նիւթական և ձեական սկզբունքները, որի վերայ պէտք է ստեղծուէր եկեղեցական աստուածաբանաւկան գիտութիւնը: Այս ձգտում էր կատարել աստուածաբանների Փոքր Ասիայի դպրոցը: Փոքր Ասիայի համայնքները Բորդ գարում եկեղեցւոյ հոգեսոր կենդանի մասն էին կազմում: 150 և 200 թ. թուի մէջ յայտնի են մի շարք Փոքր Ասիական աստուածաբաններ, որոնք ջատագովական և հականերիտեկոսական գրուածքներ ունին. օր Խելիտոն, Հերապօլիս, Ապողինարիոս, Ռոդոն, Միլտիադ և այլն: Աւելի քան հաւանական է, որ նրանք էապէս միևնոյն աստուածաբանաւկան աւանդութիւնն էին ներկայացնում, որի աւելի եռանդուն և աւելի պարզ արտայացածիչն էր Արևի Ս. Իրինէոսը: Ճշմարիտ քրիստոնէական վարդապետութեան, նրա բովանդակութեան, աղբեւրների և յայտանշանների ճշմարտութեան ճանաչելու հարցի նկատմամբ Ա. Իրինէոսը բաց է անում եկեղեցական ճշմարտութեան հասկացողութիւնը: Միայն եկեղեցւոյ մէջ է ճշմարտութիւնը, եկեղեցին ունի առաքեալներից ստացած թղթեր և հաւասարապէս մինչեւ առաքեալները համոզ բերանացի աւանդութիւն, որի ամբողջ անվրէպ պահպանութիւնը անընդհատ յաջորդական եպիսկոպոսութեամբ է ապահովում: Աստուածաբանաւկան գիտութեան համար սահմանում է որոշ խնդիր. նա յայտնութեան բովանդակութեանը չպիտի գաւաճանէ, այլ հաւատոյ անփոփոխ օրէնքների վերայ հիմնուած զգուշութեամբ պիտի քննէ առակներում արտայայտւած մտքերը և համաձայնացնէ հաւատի բովանդակութեանը, բանայ մարդկային փրկութեամբ յայտի քննէ առակներում արտայայտւած յայտնութեան եղանակները և Զին ու նոր Կտակարանի նպատակը, ապացուցէ Քրիստոսի մարմնացումը և յարութիւնը անսաման համոզմունքի հիման վերայ*, որ ստացել է նա առաքեալներից և պահպանել է մաքրութեան և անվնաս գրու-

* Обличеніе и опроверженіе лжеименного знанія. IV. 55. 8; III. 4. 1; II. 28-2; III. 5. 4. 4; IV. 26. 2; 1. 10. 5.

թեան մէջ: Զատագովների միելիսովայական-աստուածաբանական գաղափարականութեան հակառակ ս. Իրինէոսի աստուածաբանութիւնը կրում է աստուածաշնչական-իրական ընաւորութիւն. նա իրեն նպատակ չէ դնում ապացուցանել քրիստոնէութիւնը իրեւ ճշմարիտ փելիսովայութիւն, և Գնոստիկեանների նախնական տեսութիւնների հակառակ ամբողջովին հիմնւում է Յայտնութեան վաստերի վերայ, ուստի և նրա աստուածաբանութիւնը գլխաւորապէս «վաստերի աստուածաբանութիւնն է», և ամենից առաջ ս. Քրքի կենդզոնական փաստի-մաքրկութեան Քրիստոսով ազատութեան փաստի: Ա. Իրինէոսի աեստութեանց հիմք ծառայում է ոչ թէ Լոգոսը (Բանը), ինչպէս Աստուծոյ և աշխարհի մէջ յարաբերութեան միջնորդ, այլ Քրիստոս, Աստուածամարդը, ինչպէս միջնորդ փեկութեան: Նրա համար քրիստոնէութիւնը — փրկութեան կրօն է, որ կատարուել է Քրիստոսի միջոցով Բանի մարմնացմբը: Ա. Իրինէոսի աստուածաբանական վարդապետութեան այս կողմբ վերջները խիստ ազգեցութիւն ունեցաւ աստուածաբանական մտքի զարգացման և ուղղութեան վերայ:

Գնոստիկեանների հոկայական, մաքրկային գիտակցութեան ոչ մի սահման չճանաչող, ձեռնարկիութեան հակառակ ս. Իրինէոսը զգուշացնում է նրանց անբարտաւան սաւառնութներից, սահմանափակ մտքով անքնների աստուածային կեանքի գաղտների մէջ թափանցելու փորձից և յայտարարում է այն ոկզբունքը, թէ առաւել լու և օգտակար է պարզ և քիչ իմացուլինել և Աստծուն մօտենալ սիրոյ միջոցով, քան թէ իրեն գիտուն և փորձառու ձեացնելով դուրս դալ հայոյին իւր Աստծուն*: Սակայն ս. Իրինէոսից առաջ կար աչքի ընկնող Զատագովների գործունէութիւնը, իսկ նրա զիմաց կանգնած էին Գնոստիկեանները. թէ առաջներից, և թէ Երկրորդներից նա շատ բան սովորեց ժամանակի պահանջին համեմատ. հակառակորդների վճռի մէջ բանաւոր փաստերի կարեն զգաց նմանապէս սեպհական վկայութեան և ուղղափառների հաստատութեան համար: Ուստի և, նոյն իսկ եթէ նրա աստուածաբանութեան մէջ գտնել չէ կարելի փելիսովայական ձեերի ազգեցութիւնը, այնուամենայնիւ նրա մէջ պարզ կերպով արտայայտւում է ժամանակի փելիսովայական աւանդութեանց ազգեցութիւնը: Խնչպէս առաքեալների, այնպէս էլ ս. Իրինէոսի առաջ գրուած էր Եկեղեցւոյ ներքին խնդիրների քննութեան ժամանակ կլասսիկ գրականութեան ձեերը յարմարեցնելու հարցը: Սակայն, նրա գլխաւոր աշխատութիւնը, թէ նշանակուած է միայն

* Обличеніе и опроверженіе лжеименного знанія. II. 26. 1.

ուղղափառ քրիստոնեաների համար, այնուամենայնիւ հերեւակոսութեան հետ ունեցած կոռի արգիւնք էր, ուստի և անվճռելի է մնում, թէ գրականութեան այդ ձեռքը քրիստոնէական եկեղեցւոյ մէջ նշանակում է միայն զէ՞սք լինել հերեւակոսութեան դէմ կռուելու համար, թէ պէտք է նրա սեպէ հակոն շըջանի մէջ խաղաղ աշխատանքի համոր միջոց գառչար; Մօտեքքս գտնուած ո. Խրիստոսի «Յոյցը առաքելական քառողութեանց» աշխատութիւնը ենթադրել է տալիս, որ ո. Խրիստոսը առաջնիւ կողմն է:

Նատ ընական է, որ հելենական քաղաքակրթութեան և գնոստիկեան սիստեմների հետ առընչութիւն ունենալը, նմանապէս եկեղեցւոյ մէջ կրթուած հեթանոսների մուտք գործելը, որոնք ձգտում էին նոր հաւատոյ համար իրենց հաշիւ տալ, բաւարկանաչափ պատճառ էին նոր խնդիրների ծագման համար; Եկեղեցական շըջաննեցում աստիճանաբար կարիք զարդացաւ՝ հասկանալու և գիտապէս մշակելու եկեղեցական վարդապետութեան բովանդակութիւնը, ամուր կերպով հաստատել նրան պատմական-մեկնաբանական ճանապարհով և փելիսուիայօրէն Քիմնել, որպէսով զրանով բաւարկանութիւն տայ աստուածաւ յայտնութեան ճշմարտութեան քննութեան վերաբերմամբ մարդկային հոգւոյ ընական ձգտման, ևս առաւել խորը թափանցելու նրա մէջ և հատկանալու ինչպէս ամբողջական աշխարհայիշեցողութիւն. սրանից ծագում է պահանջ-հասկանալ եկեղեցւոյ վարդապետութեան առանձին կտորների ներքին կապը, իրոք մի սիստեմի, համեմատել այն գիտութիւնների և հատկացողութիւնների հետ, որոնց քաղաքակրթ մարդկանց ընական միտքը հատել է առանց Յայտնութեան օդնութեան, որոցի նրանց հետ եղած կապը և ըստ կարելոյն հաշտեցնել: Այս դէպէքում երեքմն ծայրայեղութեան էին հարնում և առանց հիմքի, կարելի է հատատել որ ո. Խրիստոսը աչքի առաջ է ունեցել ոչ միայն հերեւակոսական գնոստիկականութիւնը, այլ և այդ միենոյն ժամանակ ծագութ և նրան ըստ ամենայնի նման եկեղեցւոյ ներքին ուղղութիւնը: Թէ որքան քաղմատեսուկ էին այն ժամանակների եկեղեցւոյ ներքին խնդիրներն, այդ մասին կարող են վկայել Սարգիսի Մելիքոսի երերի ցանկը, որ դժբախտաբար կորած է և մի շարք՝ գիտական աշխատութիւններ, որոնք գրուած էին եկեղեցականների ձեռքով*:

Այդպիսով՝ առգէն լլ գարում, մի կողմնց վարձեր կատարուեցն աստուածաբանական գիտութեանց մէջ յարմարեցնելու ժամանակից փելիսովայութեան և քաղաքակրթութեան

* Եւսնրիոս. եկեղ. պատմ. IV. 26 2. V. 27.

հասկացողութիւններն ու ձմեռը ջատագովական վիճաբանական նպատակով, միւս կողմնց ցոյց տրուեցին աստուածաբանական վարդապետութեան ազգեւներ և յայտանշաններ սուրբ Գլքի և հաւատոյ կանոնների մէջ, առաքելական աւանդութեան մէջ, որի կրողն ու պահպանողը հանդէս էր գալիս առաքելական եկեղեցին: Միենոյն ժամանակի աւելի և աւելի երեան են գալիս գիտական աստուածաբանութեան հետքեր քրիստոնեայ աշխարհի զանազան մասերում: Առօսուստիանոսի հոգվածում ունեցած ուսումնաբանի նման, կարելի է մտածել, ուսէին ուսումնաբաններ նաև միւս Զատագովները (օր. Տացեան), որ այն ժամանակ սովորական երեսյթ էր: Նրանք հիմնում էին փիլիսոփայական դպրոցների օրինակով. այս դպրոցների կազմակերպութեան և գառաւանդման եղանակի մասին ոչ մի տեղեկութիւն չի մնացել: Անկասկած Ս. Յուստիանոսը ուսումնաբանում ևս նոյն փելիսովական էր, ինչպէս և գրական գործունէութեան մէջ: Քրիստոնէական դպրոցների այսպիսի գրութեան մէջ: Քրիստոնէական գալութեան մէջ գոյութիւն ունէր խիստ գրգռումն Բարգածանի, Վաղինտիեմ գոյութիւն ունէր կարպութեան անդամները մէջ:

Զանազան տեղեր մէնք պատահում ենք գիտական հետաքրքրութեամբ լցուած մարդկանց խմբերի. Փոքր Ասիայում հակատրամաբան դատողները ցոյց են տալիս ձգտումն գէպի Ս. Գրքի քննական հետազոտութիւնը, նմանապէս Սարգիսի Մելիտոնի և Անտիոքի թէոփելոսի գործունէութիւնը, հազիւ թէ մնաբ առանց ազգեցութեան տայ շըջաններում, որտեղ նրանք ծառայում էին: Երուսաղէմի Աղէքսանքը եպիսկոպոսը հիմք է գնում երուսաղէմի աստուածաբանական գրագարանի: Մեր ձեռքը հասած նրա թղթերի պատառիկները ցոյց են տալիս, որ նա լեզուի հետ իւրացրել էր նաև ժամանակի գիտական սովին: Նրա մօտ կանոնած է կեսարելայի թէոկտիսի արձանը (Պաղեստինում), ինչպէս պաշտպան անկախ աստուածաբանական գիտութեան: Կեսարելայի Ֆիլմիլիանոսի մօտ (Կապագովիլիայում) Որոգինէսը պատապարան գտաւ: Սա եկեղեցական մարդկանց մի ընկերութիւն էր, որը եռանդուն կերպով գիտութեան էր նույներել իրեն: Գրգ գարե ոկզեին հոգվածում գոյութիւն ունէր գիտական մի զպրոց, որ կազմուած էր գլւան որպես առեւելքից եկած անձնիքներեց, որտեղ մշակում էր ձեռական մեկնաբանութիւնը, բնագրի քննադատութիւն, քերականութիւն, տրամաբանութիւն, մաթիմաթիկա և փորձնական գիտութիւններ: Այստեղ եռանդով ուսումնասիսում էին Արիստոտելին, Թէոփրաստին, Եւկլիտին և Գալանուսին: Տերտունիանոսի եվկերը ցոյց են տալիս որ նոյն իոկ Կարթագէնի քրիս-

տոնեաների մէջ անպակաս էին այնպիսի անձննք, որոնք նկեղեցւոյ գիտական ձգտումներին կտղմնակից էին*: Եկեղեցւոյ ներքին գիտական շահագրգուռութեան և պահանջների հետզհետէ աճումն բնականաբար ամենից առաջ և ամենից առաւել պէտք է որ զգացուէր ժամանակակից հեթանոսութեան հոգեոր քաղաքակրթութեան կենտրոնում — Աղէքսանդրիայում, և նրանց բաւականութիւն տալը պէտք է որ առանձնապէս զգալի կերպով երևան գար Բ. - ըդ դարի վերջին և Գ. - ըդ դարի սկզբներին, երբ որ հին աշխարհը մի անդամ և իւր հոգեոր ոյժերը հաւաքեց և միացած կրօնի ու փելսոփայութեան հետ, ինչպիսին հոր-պղատնականութիւն էր, քրիսնէութեան ընդդէմ հզօր հակառակորդ հանգէս ըերեց: Եթէ քրիստոնէութիւնը իրեն նպատակ զնէր հաստատուել այդ նոր զրութեան մէջ, այն ժամանակ նա պէտք է զինուէս գիտութեամբ և փիլիսոփայութեամբ: Այստեղից պարզ է ըսլորովին և անոպանելի չէր կարելի համարել, որ Աղէքսանդրիայում, ինչպէս որ Պանթենի և Կղեմէսի ժամանակն էր, կատելիդական զպոցը դարձաւ աստուածաբանականից փելսոփայութեանի:

Նւ այսպէս, Եկեղեցւոյ ներօը և Եկեղեցւոյ ներքին խնդիրների նկատմամբ աստուածաբանական մտքի աշխատանքը հետպհետէ ստեղծեց Եկեղեցական աստուածաբանական գիտութիւնը, որը ընդդրկում էր աւելի և աւելի իրական հարցեր և զարդացնումէր գրանց ու Գրքի և աւանդութեան հիման վերայ ժամանակակից գիտութեան օգնութեամբ: Առաջ եկաւ աստուածաբանական ուղղութեան — որի ներկայացուցիչն էր Ս. Նրինիոսը, և Զատագովների աստուածաբանական եղանակների շահերի կապակցութիւն: Որանով բաւական հիմք տրուեցաւ աստուածաբանական շարժման բազմակողմանի և խորին զարդացման համար: Եկեղեցական աստուածաբանական գրականութիւնը անցեալի սերտ կապով ապագայի համար հող պատրաստելով, իւր առաջը նոր խնդիրներ է զինում աշքեց չթողնելով և նախկին ները և իւր համար նոր ճանապարհ է հարթում: Աստուածաբանական գիտութեան հէնց զարդացումը զանազան տեղեր իւր առանձնայատուէ բնաւորութիւնն է ստանում: ոմանց մէջ գերակշումը էր անձնութիւնը գէպի Եկեղեցական աւանդութիւնը, ուրեշների մէջ՝ գիտական նպատակները, որը կախուած էր գլխաւորապէս Եկեղեցական շըջանի հոգեոր ուղղութիւնից, որի մէջ այս կամ այն աստուածաբանական մշակում էին իւրենց գործունէութիւնը:

* Prof. Ad. Harnack, Lehrbuch der Dogmengeschichte, 4 Aufl. Tübingen, 1909, B. I. S. 639—640.

Սակայն Որոգինէոի նախընթաց շըջանի բարձրագույն միայն աստուածաբանական սիստեմի բացակայութիւնն էր, այլ կարծես նըր պարզ զիտակցութեան անհրաժեշտութեան բացակայութիւնն էր: Եկեղեցական վարդապետութեան միայն կէտերն էին բացւում, որոնց անհրաժեշտ էր առաջ մղել և պաշտպանել. ուստի և աստուածաբանութիւնը, Եկեղեցական վարդապետութեան սինթէզը արտայտուած էր միայն խորհրդանշաններով, որոնց մէջ հաւատացեալները համառօտ կերպով զանում էին ամեն բան, ինչի որ պէտք էր հաւատալ: Այս հասարակ և ընդհանուր ձեւերից զուրո՞՝ դոյութիւն ունէին միայն գնուտիպեան սիստեմները: Նոյն իսկ Կղեմէսը, որ փելսոփայական սկզբունքներ մտցրեց քրիստոնէական վարդապետութեան հէնց բովանդակութեան քննադատութեան մէջ, վարդապետութեան առանձին տարրերը մի ներդաշնակութեան սիստեմի մէջ համախմբելու գիտակցութեան անհրաժեշտութիւն չէ ցոյց տալիս:

Որոգինէու՞՝ որ առաջինն է քրիստոնէայ մտածողներից, տռաջ մղեց աստուածաբանական սինթէզի գաղափարը և իրականացըրեց, հիմնելով ո. Գրքի և Եկեղեցական աւանդութեան հողի վերայ-փիլիսոփայական-աստուածաբանական սիստեմ, որ ընդդրեկումէր Եկեղեցւոյ հաւատի ամբողջ բովանդակութիւնը: Նա հաստատեց Եկեղեցական գիտական աստուածաբանութեան հիմնական սկզբունքերը և կլասիկ գիտութեան «Եկեղեցականնելու» վճարական քայլն արտաւ: Նու լուծեց այն մեծ հարցը, որ հաստատապէս ներկայանումէր քրիստոնէայ մտածողներին և նրանից առաջ, և որի լուծման համար բաւականաշատի գործ էր կատարուած, որով Որոգինէոի գործի համար հող էր պատրաստուել: Առանձնապէս շատ բան է կատարել Կղեմէսը այն էական հիմունքների մշակման համար, որոնցով նրա աշակերտ Որոգինէու աստուածաբանական գիտութեան հայր գարձաւ բառեկ բուն նշանակութեամբ և միենայն ժամանակ հիմնադիրն եղաւ այն աստուածաբանութեան, որ IV և V գարերում իւր զարդացման գագաթնակէտին հասաւ: Մի կողմից Որոգինէոը աւելի խոր էր հասկանում ինչպէս փիլիսոփայական այնպէս էլ քրիստոնէական գիտութեան ո. Գոյց հիմունքները քան թէ Կղեմէսը. միւս կողմից նա ցոյց է տալիս աւելի քան Կղեմէսը, զգայնութիւն եկեղեցական գիտութեան համար և ձգտումն գէպի իւր աստուածաբանութեան Եկեղեցական նշանաբառութիւնը. միւնոյն ժամանակ հին գաղափարականութեան և քրիստոնէութեան կրօնի միութիւնն էր նրա հշմարիտ և սուրբ հաւատը:

Աւստի նա կարող էր ընդունելու և մշակելու յունական գաղափարական փելիսոփայութեան առդեւնքները, նմանապէս իւրացնել, զարդացնել և միացնել մի սիստեմի մէջ այն բոլորը, ինչ որ մինչեւ իւր ժամանակը քրիստոնէական գիտութեամբ մշակուած էր: Նա օգտուեց նախորդ աստուածաբանների փոքրանկ, կամենալով ըմբռնել քրիստոնէութեան բոլանդակութենը և փելիսոփայօքէն հաստատել նրան, և քրիստոնէական աստուածաբանութեան զարդացմանը ինքնուրոյն նշանակութեւն տուեց, անկախ վիճաբանական նպատակներից: Յունական կրօնական փելիսոփայութիւնը և ընդհանրապէս ժամանակակից գետութեան ձեւերն ու մէթոգները պէտք է ծառայէին որպէս միջոց ոչ միայն կրակապաշտութեան, գնոստիքականութեան և եկեղեցւոյ մէջ հերկտիկոսական շարժման հերքման համար, այլև որպէս միջոց, գիտական քրիստոնէական կրօնական վարդապետութիւն ատեղծելու, գիտական սիստեմ, որ ոչ միայն եկեղեցւոյ հաւատին հակառակ չլինէը, այլ յենուելու նրա վերայ, բացարէք և բարձրացնէը հոգեւոր վիճակի մէջ: Հաւատոց կանոնի անփոփոխ հիման վերայ պէտք է շինուել քրիստոնէական իմացականութեան ամբողջութիւնը — մասամբ ս. Գրքի հետախուզութեամբ, մասամբ տրամաբանական եզրակացութիւններով^{*}, և այդպիսով պէտք է ստեղծուի մի սիստեմ, որ պէտք է ընդգրել լինելութեան սկիզբը և բոլոր աշխարհի լինդիները և վարդ քրիստոնէական տեսակէտով: Այդպիսով Որոգինէսին յաջողուեց հաշտեցնել գիտութիւնը քրիստոնէական հաւատի հետ, բարձր քաղաքակրթութիւնը աւետարանի հետ եկեղեցական վարդապետութեան հողի վերայ: Իւր «Աւճականական» շարադրութեան մէջ աստուածաբանութեան սիստեմատիկ բացարութեան առաջին փորձն արաւ որպէս գիտութեան, որտեղ պարզ և ուղիղ կերպով հաստատեց գիտական աստուածաբանութեան սկզբունքները, որ նրա մօտ նշանակուած են երեք շրջաններով: 1) Ս. Գրքի ընդունելութիւնը որպէս աղքեւը եկեղեցական աստուածաբանութեան, 2) եկեղեցական վարդապետութեան հատատուն պահպանելը և անպայման պարտականութիւն յարմարուել նրան և 3) այս հիման վերայ աստուածաբանական տեսութեան ազատ զարդացումը:

Որոգինէսի համար ս. Գրքը գլխաւորապէս բացարձակ ճշշմարտութեան աղքեւը էր. Որոգինէսը երկրագումէր նրան, անդադար ուսումնասիրում և բոլոր ոյժով ծդառնում էր նրա ճշմա-

ըլտ մտքի մէջ թափանցել. ս. Գրքի մեկնութիւնը նրա համար աստուածաբանութեան սկիզբը և վերջն էր: Աստուածաբանութեան խնդիրը նո այնպէս էր հասկանում, որ ս. Գրքի հիման վերայ հոգեւոր քրիստոնէութիւնը հասկանայ և հաւատաբ գիտութեան և զնութեան ստահաննեն բարձրացնի, որին կարելի է հասնել ս. Գրքի այլաւենական ձեւի բացարձութեան միջոցով, որ հնարաւորութիւն է տալիս ճանաչել Աստուածոյ բարձր Յայտնութիւնը և միհնոյն ժամանակ հին վիճիսոփայտութեան եզրակացութեան հետ եկեղեցւոյ վարդապետութեան գէպքերը կապակցել: Ամենալայն կերպով ապրածուած և կարսելի է տուել, ս. Գրքի այլաւենական միստիքական բացարձութեան եղանակի սովորութիւնները առաջին անդամ Որոգինէսը գիտական սիստեմի բարձրացրեց^{**}:

Ապա, Որոգինէսը վճռապէս հաստատում է, որ մենք առաքեալները յաջորդաբար ստացած և մինչեւ այժմ եկեղեցւոյ մէջ գոյութիւն ունեցող կարգերը պէտք է պահպանենք, և որ միայն այն ճշմարտութեանը պէտք է հաւատալ, որ եկեղեցական և առաքելական աւանդութիւնից ոչ մի բանով չէ շեղւում^{***}: Ս. Գրքով և եկեղեցական վարդապետութեամբ գծուած սահմանները Որոգինէսի համար բացարձակ նշանակութիւն ունին և չպէտք է զանց անել: Բայց Որոգինէսի գործունէութիւնը վերաբերում է այն ժամանակին, երբ որ սկզբունքները գեռ ևս ճիշտ կերպով որոշուած և եկեղեցով ձեւաւորուած չէն, և թէե եկեղեցական վարդապետութեան հիմնական կէտերը բաւական պարզ էին, սակայն, մի քանի վերաբերութեամբ, գուցէ և ոչ քիչ նշանակութիւն ունեցող, դեռ ևս որոշ վճիռ չէր տրուած: Որոգինէսը պարզապէս հասկանում էր գործի այս գրութիւնը և նշանաւոր փորձն է անում՝ յոյց տալ առաքեալների այն վիճակը, որոնց մասին Ս. առաքեալները քարոզելով Քրիստոսի հաւատաբ, այն, ինչ որ անհրաժեշտ ընդունեցին, շատ պարզ բացայացտեցին բոլորի համար, մինչեւ անդամ նրանց համար որոնք աստուածային գիտութիւն փնտրելու մէջ աւելի պակաս գործունեայ գտնուեցին, ուրիշ առաքեալների մասին առաքեալները միայն ասացին որ նրանք կան, բայց լինչպէս և ինչու լոեցին, ի հարկէ, այնպիսի ձևով, որպէսզի աւելի նախանձախնդիրները և յաջորդների մէջ լիմասութիւն սիրողները վարձութիւններ ունենան և այդպիսով իրենց մտքի պտուղը

^{*} О началахъ IV, 11 слѣд. пер. стр. 326 сл.

^{**}, , I. введ. 2, русск. пер. стр. 6.

) О началахъ, кн. I. введеніе, § 10: рус. пер. «Твореній Оригена, учителя Александрийскаго». вып. I. Казань 1889 (изъ Казанск. Духовн. Академіи) стр. 11.

ցոյց տան, այսինքն նրանք, որոնք արժանի և ընդունակ կլինեն
ճշմարառթեան ընդունելուն *:

Սակայն այնքան բարձր և տպաւորիչ աչքի ընկնող անհատա-
կանութեամբ մի մաքի համար, որ խորասուցւած էր վառվառն
ոգեսրութեան մէջ զէպի ճշմարտութիւնը և անյօդդողտ ձգտում
էր ժամանակակից քաղաքակրթութեան տերմինների մէջ նրան
արտայայտելու, դժուար էր քննութեան համար որոշուած ոահ-
մանները պահպանել, այն պայմաններում, որոց մէջ նա մշա-
կում էր եկեղեցական վարդապետութեան փիլիսոփայական սիս-
տեմը: Որոգինէոը ուղիղ կերպով հաստատելով աստուածաբանա-
կան սկզբունքները, լինքը իսկապէս ո. Գրքին հաւատարիմ
աւանդապահ չմնաց, ընդարձակ փիլիսոփայական կրթութիւնը
առաւել լոււ էր որոշում նրա աստուածաբանական միտքը,
քան ո. Գիրքը և եկեղեցւոյ աւանդութիւնը: Ուստի, Որոգի-
նէոի սիստեմը երեան է հանում փիլիսոփայական տարբերի նրա
կերպ թողած լուրջ ազգեցութիւնը և նրա ամբողջ վարդա-
պետութիւնը: առանձնապէս ուսուցումը ո. Երբորգութեան մա-
սմն՝ ներկայացնում է կարծէը գաղափարների երկու կարգ—
եկեղեցական—աւանդական և փիլիսոփայական: Որոգինէոը,
գործելով վերին առողջմանի կարեոր և ծանր հարցերի շրջանում,
եկաւ մի քանի եղբակացութիւնների, որոնց չէր կարելի համա-
ծայնեցնել ընդհանուր եկեղեցական գիտակցութեան հետ: Որո-
գինէոի աստուածաբանական սիստեմի նիւթական պակասու-
թիւններից անհրաժեշտ ենք համարում յիշել այստեղ այն կե-
տը, որ աստուածաբանական մաքից յաջորդ պատմութեան մէջ
առանձնապէս կարեոր է հանդիսանում, այն է անօրոշութիւնը
աստուածային անձնաւորութեան փինագարձ յարաբերութեան
վարդապետութեան մէջ: Որոգինէոը տաանուում էր համա-
գոյութեան՝ որով նա հրապուրւում էր տրամաբանօրէն, և
անպայման հնագանդութեան վարդապետութեան մէջ, որին
հասցեց նրան արաբչագործութեան հարցը: մի կողմից աս-
տուածային անձնաւորութիւնների էութեանց միութեան և
հաւատարութեան վարդապետութիւնը շատ յաճախ արտա-
յայտւում է այնպիսի գարձուածքների մէջ, որ յատուկ է
յաջորդ գարերի ուղղափառ աստուածաբանների համար, միտ
կողմից նա վճռապէս անց է կացնում և հաստատում է աստուա-
ծային անձնաւորութիւնների մէջ այնպիսի յարաբերութիւններ,
որոնք նրա աստուածաբանութեանը տալիս են խիստ ստորա-
գըլիութեան ընաւորութիւն: Անկասկած, Որոգինէոը ստո-

* О началахъ I. введ. З. сл. рус. пер. стр. 6 сл.

քաղրելիութեան գաղափարի պաշտպան էր *, թէև նրա տե-
աակէտը բացարձակապէս զուրս էր ձգում արիական վարդապե-
տութիւնը, այնուամենայնիւ յիշուած երկուութիւնը պատճառ
եղաւ Որոգինէոի հետեւողներին տջակողմեանների և ձախակող-
մեանների բաժանուելուն, Փրկչի կատարեալ աստուածութեան
պաշտպանների և այդ գաղափարի հակառակորդների, թէև թէ
առաջինները և թէ երկրոգները, ըստ երևոյթին, հաւասար
իրաւունքով վկայ էին կոչում Աղեքսանդրիայի մեծ ուսուցչին:

Որոգինէոը անվանելի կերպով աղօում էր իւր հետեւզ-
ների վերայ իւր աստուածաբանական ուղղութեամբ և իւր
հանձարի ինքը տպաւորեց աստուածաբանական այն գաղա-
փարի վերայ, որ յայտնի է Աղեքսանդրիայի աստուածաբանա-
կան գալուց անուամբ: Նա հաստատեց նրա մէջ իւր աստուա-
ծաբանութեան աշքի ընկնող յատկութիւնները: Եգիտական
արտայայտութիւն, տեսութեան և միստիկայի գերիշխումն։
այստեղ միշտ գերակշռում է անձառելի, վերդգայական, խոր-
հրդաւոր ռոպէն—այստեղից ծագում է պղատօնական փիլի-
սոփայութեան նախամեծարութիւնը տիրող նոր պղատօնական
ձեռվի: Ա. Գրքի բացարցութեան մէջ մեծ գործազրութիւն
գտաւ այլաբանական միստիկական եղանակը, որ հէնց Որոգի-
նէսի մօտ հեռու չէր ծայրացեղութիւններից, իսկ նրա հետե-
ւորգների մօտ վնասակար հրապուրանքների հասաւ: Որոգինէոի
մեծ անձնաւորութեան ազգեցութիւնը Աղեքսանդրիայի ուղղու-
թիւնը տարածեց ոչ միայն Աղեքսանդրիայում, այլ և կարելի
է ասել, ամբողջ յունաց արևելքում: Նրանից ազատ չմնաց
նաև արևմուտքը: Միևնոյն ժամանակ Որոգինէոի աստուածա-
բանութիւնը ենթարկում է առաջին կարգի մտածողների ընդ-
հանուր վիճակի սիստեմին. այդ աստուածաբանութիւնը լայն
և խորին ապաւորութիւն էր առաջ բերում, սակայն հետեւզ-
ները ամենագլխաւոր ըանը չկարողացան մտցնել նրա մէջ—սէր-
գէպի ամբողջական կրօնական աշխարհահայերողութիւնը: Այն
ինչ որ Որոգինէոի մօտ միաւորում էր կենդանի միութեան մէջ,
այդ միութեանից հանում էր և իրը անկախ, առանձին քընն-
ում: Իւրացուցւում էին առանձին գաղափարներ, որոնք նոր
մտակարգութեան մէջ խորթ միտք էին ստանում **: Գրանով է

* Проф. В. В. Белотовъ, Ученіе Оригена Святой Троицы. Спб. 1879. стр. 277.

** Cp. Prof. R. Seeberg. Lehrbuch der Dogmengeschichte. Erster Band; Die Anfänge des Dogmes im nachapostolischen und altkatholischen Zeitalter. 2. Aufl. Leipzig. S. 517.

ոռվ Կապագովկիայի հայրերի աստուածաբանական վարդապետութեւնը եկեղեցական աստուածաբանութեան պատմութեան մէջ մէծ նշանակութեւն ունի: Նրանց աստուածաբանական երկասիսութեւնների մէջ ո. Երբորդութեան հարցը իւր վերջնական որոշումն ստացաւ, և ո. Երբորդութեան մասին նրանց հաստատած եկեղեցական հասկացողութեւնը և նրանց ստեղծած փօրմուլաները գարձան թանկադին սեպհականութեւն ուղղափառ աստուածաբանական դաւանաբանութեան, սակայն նրանք միայն բացատրեցին և բացեցին եկեղեցւոյ հաւատոյ վարդապետութեւնը, լինչպէս որ այդ արտայայտուած էր նիւկական ժողովում, չփոխելով նրա էութեւնը: Բարոել Մէծի, Գրիգոր Աստուածաբանի և Գրիգոր Նիւտացու առաքելութեւնը այլ էր, քան ո. Աթանասինը. Նրանք կոչուած էին եկեղեցական կեանքի կրթիքական մոմենտում վարդապետութեանը ձեւ և իսկական արտայայտութեւն տալու, որ հէնց սկզբեց կաթուղիկէ եկեղեցւոյ մէջ պահպանւում էին և որի պաշտպանութեւնը ո. Աթանասը իրեն կեանքի նպատակ էր գրել: Ո. Գրիգոր Աստուածաբանը այս վարդապետութեւնը ներկայացրեց իւր ամբողջ պարզութեամբ և նրան կատարեալ արտայայտութեւն տուեց, որը հաւատոյ ամենաբարձր գաղանքները հանրամատչելի էր գարձնում: Բարոել Մէծը նրան կեանքի մէջ ներմուծեց, իսկ Գրիգոր Նիւտացին նրան գիտական—վիլիսսիայական հաստատութեւն տուեց: Սակայն, հիմք ունենալով հաւատոյ աւանդական վարդապետութեւնը և յենուելով ո. Աթանասի աստուածաբանական վարդապետութեան վերայ, Կապագովկիայի հայրերի աստուածաբանութեւնը, նրան կազմող տարրերի և զանազան ազդեցութեւնների կախումով, կըօնական բարոյական աշխարհահայտնութեան ընդհանուր որում մէջ այնպիսի առանձնայատեսութիւններ է ներկայացնում, որ նա իրենով ոչ միայն եկեղեցական վարդապետութեան բացայայտելու և հաստատելու յաջորդ շրջանն է ներկայացնում, այլ և ո. Աթանասի հետ համեմատած, Աղեքսանդրիայի դպրոցի հոսանքի մէջ մի առանձին ինքնույն՝ այսինքն Կապագովկիայի աստուածաբանութեան կնիքն է կուտմ: Նրա էական մասը ներկայացնում է այն բարձր գիտական հետաքրքրութեւնը, որ երեան է գալիս քրիստոնէութեան ընդհանուր հասկացողութեան, հին քաղաքակրթութեան հետ նրա ունեցած յարաբերութեան, աստուածաբանական հարցերի լայն և խորը կերպով հրապարակի վերայ դնելու մէջ: Կապագովկիայի հայրերը կարծէք թէ ուղղում են եկեղեցական աստուածաբանութեան գիտական գիտական գիծը, հարստացնելով նրան ո. Աթանասի վերաբերով և գիտական հետաքրքրութեան հետ:

Կեղեցւոյ կըօնական—փորձնական եղէալների անձնութեալնը: Կապագովկիայի աստուածաբանութեան տիպարի մէջ առանձին մի այլաձեռութեւն ներկայացնում է եկեղեցւոյ գրողներից մէկի, Խկոնիայի եպիսկոպոս Ամթիլոքէսի աստուածաբանական վարդապետութեւնը, որ սերտ բարեկամական կապեր ունէր Կապագովկիայի հայրերի հետ, և որի աստուածաբանական գիտութեան պատմութեան մէջ ունեցած նշանակութեան վերայ միայն վերջին ժամանակներս է ուշք գարձրուած: Խիստ կերպով նա պաշտպանում էր ո. Երրորդութեան և քրիստոսաբանութեան վարդապետութեան մէջ Կապագովկիային երի աստուածաբանութեան գիրը, և ոչ միայն պաշտպանում էր, այլ և օժանդակեց եկեղեցական վարդապետութեան մէջ աւելի ուղիղ արտայայտութեան նոր տերմիններ կամ աւանդական ձևերի կոմբինացիաներ ներմուծել: Այնուամենայնիւ նա ըաւականաշափ հեռանում է Կապագովկիայի հայրերի աստուածաբանութեան ընաւորութեւնից, Ամթիլոքէսի էական տարբերութեւնը իւր ընկերներից այն էր, որ նա միանդամայն ազատ մնաց Որոգինէսի աղղեցութեւնից և երեան չէ հանում նրա գաղափարները, և թէօրետիկ ու վերացական ընաւորութեամբ բոլոր խորին հացցերը Ամթիլոքէսի հորիզոնից գուրս են գոնեսում: Նրա աստուածաբանութեւնը հանդչում է կրօնական հասարակ և ո. Գրոց պատճառների վերայ և երեան է հանում ո. Իրինէսոսի Փոքր-Ասիական աւանդութեւնների զգալի ազգեցութեւն ո. Աթանասի բացատրութեան մէջ եւս առաւել գիտած խմբի որոյն աստուածաբան ներկայանում է Ապողինարիոսը (Փոքրը), որ ամենակրթեալ, հանձարեկ և վերին աստիճանի աղղեցիկ և բեղմնաւոր գրող էր: Նրան յարգում էին և բարեկամները և թշնամինները իւր կետնքի առաջին ժամանակները և իւր գրականական երկատիրութեանց մէջ Ապողինարիոսը խիստ կամակից էր ո. Երրորդութեան մասին ուղղափառ վարդապետութեանը, մեծ հայրերի և ուսուցիչների հետ մի ուղղութեամբ էր գնում, ո. Աթանասի, Բարոելի, Սրապիոնի և այն ժամանակուայ աշքի ընկնող յայտնի գործիչների բարեկամն էր: Նրա գիտականութեւնը և սկզբնական յարաբերութեւնը իրաւունք էին տալիս նրա վերայ մեծ յոյսեր գնելու և յօգուտ եկեղեցւոյ առանձին ժառայութեւն սպասելու: Կըթէ ազգեցութեւնները, որոնք ներգործում էին Ապողինարիոսի և նրա գրականական գործունէութեան,

* Prof. K. Holl, Amphirochius von Ikonium in seinen Verhältniss zu den grossen Kappadoziern. Tübingen und Leipzig 1904.

ең аւоронуթեանու աստու ածաբանիական տեսութիւնների վերայ,
չեն թոյլ տալիս ճշտութեամբ հաստատել, թէ ու ըդ դարում
գոյսութիւն ունեցող աստուածաբանիան մտքի ուղղութիւննե-
րից որի՞ն է պատկանում նա: Մի կողմից նրան համարում են *
կողմակից Աղեքսանդրիայի ուղղութեան և հակառակորդ Ան-
տիքը աստուածաբանների, որին իրեւ հաստատութիւն ցոյց են
տալիս ամենից առաջ Նրա հօր աղեքսանդրիական ծագութը
(Ապողենաբիոս մեծը), որը անկառակած ո. Աթանասի աղքեցու-
թեան տակ պիտք է եղած լինի, նրա անունը վառաւորում էր
Նիկիոյ աստուածաբանների բարոր աստուածաբանների մօտ, և ո-
առաւել Աղեքսանդրիայի ընտանիքի մէջ, որ չէս կտրել իւր յա-
ռաբերութիւնը հայրենիքի հետ և ուշադրութեամբ հետեւմ էր
Աղեքսանդրիոյ եկեղեցւոյ գործերի ընթացքին: Խնդին Ապողենա-
բիոսը բարեկամական յարաբերութեան մէջ էս ո. Աթանասի հետ,
նրա մասին միշտ խորին յարդանաց զբացմունքներով էր խօսում
որի հետ աստուածաբանիան տեսութիւնների համաձայ-
նուելու մէջ, գրանց ճշմարիտ լինելու իրական գրաւական էր
աեսնում: Բացի այդ, Ապողենաբիոսի Աղեքսանդրիայի ուղղու-
թեանը պատկանելը ալացուցւում է նաև այդ ուղղութեան
աչքի ընկնող գործիչների և նրա աստուածաբանական տեսու-
թիւնների հիմնական ընտառութեան հետ ունեցած կամեզով:
Զէկարելի անուշագիր թողնել նաև այն փառար, որ Ապողե-
նաբիոսի քրիստուաբանութեան վարդապետութիւնը վճռական
ընդգիրութեան հանդիպեց Անտիոքի գլուխուց ներկայացուցի-
ների կողմից: Միւս կողմից գտնում են **, որ Ապողենաբիոսը
պահպանել է Անտիոքի գլուխուց ամենափառաւոր աւանդու-
թիւնները: Կա եռանդուն և որամիտ հակառակորդ էր Որոգի-
նէսի, և իւր ամբողջ կրօնաւորութեամբ՝ Աղեքսանդրիելու և
մեկնաբան: Նրա հաւաքաբանական-Երկախուակուն և մեկնաբա-
նական եղանակը շատ մօտ է աւելի ու շժամանտկի անտիպա-
ցիների եղանակին: Ճշմարիտ է, Ապողենաբիոսը մօտ յարաբե-
րութեան մէջ էր Անտիոքի եկեղեցւոյ գործիչների հետ, և աօդի-
կիան գտնում էր Անտիոքի մօտիկ: Անտիոքը հանդէս է գա-
լիս իրեւ միջավայր, որտեղ նոր գարդացրեց իւր գործունէու-
թիւնը: Անտիոքի եպիսկոպոսն էր Եւստաթէոսը, որ Անտիոքի
գլուխուց գրոշակը շատ բարձր էր պահում:

* Проф. А. А. Спасский, Историческая судьба сочинений Аполлинария лаодикийского с кратким предворительным очеркомъ его жизни Сергіевъ Посадъ 1895 г. стр. 10—17.

** Prof. Ad. Harnak, Lehrbuch der Dogmengeschichte, Bd. II. S. 324—325.

Այսպիսով Ապողենաբիոսը, իւր կեանքի և գործունէու-
թեան առանձին պայմանների համեմատ, մօտ յարաբերութիւն-
սկսեց Անտիոքի գլուխուցի հետ, և զրա համեմատ էլ Աղեքսան-
դրիայի գլուխուցի նրա գերայ ունեցած սկզբնական ազգեցութիւնը
թուլացաւ: Դա յարգում և անպայման հետեւող էր ո. Աթանասի,
սակայն վերջինիս վարդապետութիւնը նրա համակարգում էր Աղեքսան-
տելի վիլսոնիայութեան և Ընդդիմակառութեան հետ: Վերջինիս
ազգեցութիւնը առաջ բերեց նրա բացասական յարաբերութիւնը
գէպի Որոգինէսի աստուածաբանական մեթոդը և որոշեց նրա
մեկնաբանութեան բնաւորութիւնը: Ապողենաբիոսը շատ կողմ-
նակիցնէր ունէր, որոնց նա գրաւում էր ոչ միայն իւր բազմա-
թիւ երկափրաւթիւններով, այլ և անմիջական անձնական ներս
գործութեամբ, նրա շուրջը ժողովում էին ոգերուուած աշա-
կերտները: Նրա գլուխուց տարբերում էր իւր խիստ ներքին
կապակցութեամբ, գէպի ուսուցիչը վերին աստիճանի յարդա-
նօր, անձնուիրութեամբ, իւր կենսունակութեամբ և եռանդով,
այլ և եկեղեցւոյ մէջ իւր տեսակէտները մտցնելու հաստատուն
ձգտմամբ: Նա գլխաւորապէս մեկնաբանական գլուխուց էր, գլուխու-
թեան աստուածաբանական-իիկլսոնիայական արուեստագիտութեան,
Արիստոտելի ընդդիմակառութեան մտքով *: Էրբ Յիսուսի Քրիս-
տոսի մէջ երկու ընութեանց իւր տարօքինակ թէօրիայի միաց-
մամբ քրիստոսաբանութեան հարցերի հանդույցի լուծելը Ապողե-
նաբիոսի վճռական փոքը ամեն կոզմից գիմագրութիւն և եկեղե-
ցական բանագրանք առաջ բերեց, այն ժամանակ Ապողենա-
բիոսի հետեւղնէը ամեն կերպ աշխատեցին պահպանէլ նրա
աշխատութիւնները ոչնչացումից, նրանցից ծագմամբ ամենաս-
հինները ներկայացնելով իրեւ գործ ո. Աթանասի Գրիգոր Սբան-
չելագործի, Հուովմի Յուլիոս և Փելքը եպիսկոպոսների, և գրա-
նով ապահովեցին Ապողենաբիոսի տեսութիւնների և աերմինու-
թիայի ազգեցութիւնը յաջորդ գարերի քրիստոսաբանական վե-
ճերը եկեղեցական աստուածաբանական գիտութեան վերայ **:

Աղեքսանդրիայի գլուխուցին պատկանող այս շրջանի եկե-
ղեցւոյ մէծ հայրենի շարքը լրացնում է ո. Կիւրեղ Աղեքսան-
դրիային: Նրա աստուածաբանութիւնը ներկայացնում է ան-
պայման ձգտումների արտայայտութիւն, որոնք տեսապետում
էին Աղեքսանդրիայի գլուխուցին մէջ եւ ըդ գարում և որոնք ուղիղ

* Prof. Ad. Harnak, Lehrbuch der Dogmengeschichte, Bd. II. S. 332, Anmerk. 3.

** См. у проф. А. И. Брицдіантова, Происхождение mono-
ситетства. СПБ. 1906. стр. 7, сл.

հետևանք էին միստիքականութեան, որը Աղքառանդրիայի դպրոցի բնորոշ գլխաւոր յատկութիւններից մէկն էր կազմում: Նեստորականութեան դէմ մզատ կուռի մէջ ո. Կիւրեղը հանդիսանում է գիտապէս հաստատել քրիստոնաբանութեան մէջ աղքառանդրիայի տեսակէտի ճշմարտութիւնը, իրկութեան դաշտավարի այն պատմական—իրական վարդապետութեան հիման վերայ, որ ո. Աթանասի կեանքի լոգէալն էր և որ կենդրանացնում էր հետաքրքրութիւնը Քրիստոնի մէջ աստուածայինի և մարդկայինի կատարեալ միութեան վերայ, որով և ապահովում էր մեր փրկութեան ճշմարտութիւնը: Նա օգտաւումէ Գիղիմոսի և Կապապաղովկիայի հայրէրի աշխատութիւններից (դլխաւորապէս ո. Գրիգոր Աստուածաբանից) և աղքառանզրացիների քրիստոնաբանութեան վարդապետութիւնը գնում է որոշ ձեերի մէջ: Բայց, մի քիչ առաջ, Որոգինէուի դէմ ոկոսուած հալածանքը իւրիուկ հօրեղբայր Աղքառանզրացի Թէոփիլոսի ձեռքով, անհետեանք չանցաւ. Նրա երկերի մէջ արգէն չի զգացւում գիտութեան այն բարձրութիւնը, որով յայտնի է Դուռդ դարի Երկրորդ կէսը, և նրան հարելի է ընդունել արտայայտող Աղքառանզրացի դպրոցի այն շրջանի, երբ նա յայտնի կերպով անկման էր հակուած:

Որոգինէուեան աստուածաբանութեան մի ուրիշ հոսանք—ձախակողմեան կարգի, ստորագրելիութեան պարզ արտայայտութեամբ, յայտնւում է Դուռդ գարում աղքառանզրացից դուրս—Պաղեստինի Կեսարիայում կ իւրեն ներկայացուրիւ է ունենում Եւսուբու Կեսարացուն: Նա իւր ոկիզըն առնումէ աղքառանզրացի Պիերիսի աշակերտ Պամիկւլիոսի միջոցով Աղքառանզրացից: Ինը Եւսուբու աշակերտ և օգնական էր Պամիկւլիոսի: Նրա հետ միասին Որոգինէուի ջատագովութիւնը գրեցին (Մեթոդիոսին ընդդէմ), որ և որոշում է նրա գաւանաբանական հիմնական գիրքը: Նա ամբողջապէս կախումն ունի Որոգինէուից: Վարդապետութեան ոչ մի կէտում նա ինքնուրոյն չէր, ամէն տեղ կարելի է գծեր նկատել, որոնք առնումն իւր ուսուցչի—Որոգինէուի մօտ: Նա նոյն իսկ երեք չփորձեց իւր սիստեմը տալ հաստատուն և յաջորդական կարգով. Նա զուրկ էր այն առաջնորդող գաղափարներից, որոնք կարող էին կապել առանձին մտքերը: Եւսուբու աշխատեց պահպանել ուսուցչի սիստեմը յարմարեց՝ նրան մէջ երեան եկած անհամաձայնութիւնները, և այս

* Preuschen Erw. въ Realencyclopédie für protestantische Theologie, herausgeb. v. Prof Alb. Hauck (3 Ausg.) Bd. V. S. 617.

ուղղութեան մէջ նա հանդէս է գալիս պահպանողական ուղղութեան ներկայացուցիչ, ձգտում է հաւատարիմ մնալ հինին, ուստի և հակառակում է նաև իսկական ֆորմուլաներ մտցնելուն: Տարբերութիւնը ո. Աթանասի և Եւսուբու այն է, որ վերջինիս մօտ կրօնական—գործնական շահերի ազգեցութիւնը չի երեւում. Նրա հետաքրքրութիւնը մաքուր գիտական է: Եւսուբու ստորագրելիութեան հիմնական տեսակէտից ընականաբար բղասում էր և նրա յարաբերութիւնը գէպի նկակական ժողովը և ամիսականութիւնը. նա արկոսական չէ, սակայն և կասկածանքով էր նայում համագոյութեան խոստավանողների վերայ, նիկիայում հանդանակն ստորագրեց, սակայն Կեսարիայի համայնքին գրած թղթում բացարձում է օսօօնօնօն կը տեսութիւնների ոգով: Նա աւելի Աղքառանզրացիներն է մօտեկքան Արքունին. բայց հարկաւոր է վճռական ընտրութիւն անել երկու հակառակորդ կողմերի մէջ, նա միանումէ այն կողմի հետ, որն աւելի հնարաւորութիւն է ներկայացնում Լոգոսի վարդապետութեան մէջ ստորագրելիութեան և Որոգինէուի Փօրմուլաների պահպանութեան համար: Եւսուբուը իւր այսպիսի տեսութիւններով մենակ չէր. Նիկիոյ ժողովում նրա համախօների մի ամբողջ խումբ կար: Ժողովից յետոյ այս միջնորդող ուղղութիւնը, որ գաւանաբանական տեսակէտով դեռ չէր զարգացած, եկեղեցական քաղաքական յարաբերութեան մէջ իւր զօրեղ աղդեցութիւնն ունեցաւ Նիկիոյ հաւատորոշումների դէմ մղուած կոււների ընթացքի վերայ: Եւսուբու յետոյ կոււնակցութեան գլուխ կանգնած էր նրա աշակերտը և յաջորդը—Ակակիոսը, արևելեան միջնորդող մէծ կուսակցութեան եպիսկոպուների մէջ ամենաաչքի ընկնող եկեղեցական քաղաքագէտը, որը կոնստանտինի ժամանակ յաղթական կերպով Նիկիոյ հաւատորոշումներին դիմագրեց: Նա զարդացրեց լայն գրական գործունէութիւն, որի ուղղութեան աղդեցութիւնը հասցրեց Դուռդ գարի մինչև 70-ական թուեկանները: Այս կուսակցութեան գործունէութիւնը, որ ուղղուած էր ուղղափառ հաւատոյ պաշտպանների գէմ, անկասկած խօստ վնասում էր Որոգինէուի հեղինակաւորութեանը, որի վերայ և նա յենում էր:

Սցպիսով, Աղքառանզրացի դպրոցը, ամբողջ ժամանակ հաւատարիմ մնալով իւր աւանդութիւնների էական սկզբնաւորութիւններին, այնուամենայնիւ հետևողաբար տարած մի աստուածաբանական ուղղութիւն չներկայացրեց, և յաճախարտացում էր աստուածաբանական գիտութեան յայտնի հետքեր, որոնք նրան մօտեցնումէին միւս աստուածաբանական գիտութեան հոսանքների՝ դլխաւորապէս

Անտիոքի գպրոցի հետ։ Նա նոյն իսկ չկարողացաւ համբերել ոչ պակաս էական ոտհմանախակումներով և ո. Գրքի բացաւ տրութեան մէջ նրան տարբերող միստիկական—այլաբանական մեթոդն։ Ողեքսանդրիայի զպրոցի ներկայացուցիչների աստ ուածաբանական գործունէութեան պահմանները անյաջող էին նրա հետեւողական և հաստատուն դորժագրութեան համար ընդհակառակը գործի օգուտը պահմանջում էր, գոնեա, որոշ չափով հրաժարուել այլաբանութիւնից յօդուտ իրական մեկնարանութեան։ Արիոսականները, որոնք իրենց գիտական ուղղութեամբ մէծ մասամբ պատկանում էին Անտիոքի զպրոցին, յետոյ էլ նեստորականները կուռում էին ոչ միայն արիստոտելեան փիլիսոփայութեան ոկղունքներով, այլ և ո. Դրվց բերած փաստերով և կարողանում էին Զին և Նոր Կտակարաններում տեղեր գտնել իրենց տեսութիւնների անհրաժեշտ հաստատութեան համար։ Նրանց գէմ մզած կուսի մէջ չէր կարելի այլաբանական բացատրութիւնների համար պաշտպանութիւն գտնել։ անհրաժեշտ էր դիտական ուղղութեամբ նրանցից իւլել այն յենակէտերը, որոնց նրանք փնտում էին ո. Դրբի բնադրի մէջ։ Ա. Աթանասն արգէն իւր գաւանաբանական Երկերի մէջ հիմնաւորապէս հաստատում է տառացի միաբը սուրբ բնադրերի և պահանջում է ու շք գարձնել ո. գրքերի ծագման պատմական հանդամանքների վերայ։ * Ալլաբանութեան դորժագրելու իրաւունքի հարցը առաջ ըերեց նոյն իսկ Կապաղաղովկիայի հայրերի կողմից ոկղունքային բացատրութիւններ։ Գրեգոր Նիւսացին պաշտպանում է այլաբանութիւնը եկեղեցւոյ յարձակման գէմ։ Գրեգոր Աստուածաբանը իւր սեպհական խօսքերով միջին տեղն է բռնում, իսկ Բարսեղ Մեծը խիստ ձեռվ մերժում է այլաբանութեան դորժագրութիւնը նոյն իսկ խօստական քարոզների համար*^{*}, ուստի և ո. Գրքի բացատրութեան մեթոդի հիման վերայ նրան Երեքեմն համարում են Անտիոքի սկզբունքների ներկայացուցիչ***։ Նոյն իսկ Դիքիմուը այդ նկատմամբ միշտ հաւատարիմ չմնաց Ողեքսանդրացիներին։ Իսկ ինչ Ամթելորէսին

* Противъ арианъ I. 54: русск. пер. ч. 2. (изд. 1852 г.) стр. 238.

** Prof. K. Höll, Amphiloctius von Ikonium, S. 254—261
Cp. Weiss H., Die Kappadocier Basilius, Gregorius von Nazianz und
Gregor von Nyssa als Exegeten. Ein Beitrag zur Geschichte der
Exegese. Braunschweig 1872, S. 59. ff.

*** Tixeront I. Histoire des dogmes. II: De saint Athanase
à saint Augustin (318—430). Paris. 1909. p. 13.

է վերաբերում, նա սահմանափակւում է տառացի բացատրութեամբ, իսկ Ալողինարիոսն արգէն իւրացըել էր Անտիոքի զպրոցի մեթոդը։

Մի այլ աստուածաբանական ուղղութիւն, որ Դ. և Յ. դարերում գորեզ ազգեցութիւն ունեցաւ դաւանաբանական շարժումների և եկեղեցական վարդապետութեան բացայացտելու և հասաւաելու վեխայ, իւր արտայայտութիւնը գտաւ Անտիոքի ուպրոցում, որ ինչպէս յայտնի է, իւր հիմնական ընաւորութեամբ հակառակն էր Աղեքսանդրիայի զպրոցի։ Այս երկու ուղղութեանց կունեցը կազմում են այդ շրջանի եկեղեցական աստուածաբանական կեանքի աչքի ընկնող յատկութիւնը և շարունակում են նրա շրջաններց գուրս ևս։ Անտիոքի ուղղութիւնը իւր հիմնական սկզբունքների մէջ առելի հետեւողական սկզբունքների մէջ այդ այլական և բացասական կողմերը, որոնք երեան եկան նրա մէջ, աղեքսանդրիայի զպրոցին հակառակ, հենց նրա սկզբնաւորութեան ժամանակ այն է մեկնաբանութեան մէջ խիստ գիտական քերականական պատմական մեթոդ և գժկամութիւն գէպի մաքուր տեսութիւնը Ար Արիստոտելի երկախոստիկան մեթոդի գորժագրութեան պատճառով, և ընդհանրապէս արիստոտելեան փիլիսոփայացութեան գերեցիանու թիւնը։ Անտիոքի ուղղութեան աստուածաբանութեան մէջ վեհութեանը գերազանցում էին հանկացութեան պարզութիւնը դաւանաբանութեան մէջ։ Սակայն Անտիոքի զպրոցի մէջ Դ. և Յ. ըդ գարերի ընթացքում անհրաժեշտ է զանազանել Երկու շրջան առաջինը Ա. գարե կիսեց ինչ այն կողմն է հասնում, Երկրորդն ընկնում է Դ. ըդ գարե վերջին Երկու տառնեակ տարիների և Յ. ըդ գարածին կէսի վերայ*^{*}։ Առաջին շրջանում Անտիոքի զպրոցը տուեց արիստոկան և կիսաարիստոկան յայտնի գործիչներ, որոնց սերտ կապում էր Լուկիսոնուկ հետ յարաբերութեան լոկ յիշողութիւնը և նրանք ուրախութեամբ իրենց կոչում էին սոլուկիան կիսուներ (օլլօսակայտա)։ Դրանք են՝ ամենից առաջ ինքը Արիստ,

*) Prof. H. Kühn, Die Bedeutung der Antiochischen Schule auf dem exegetischen Gebiete, nebst einer Abhandlung über die ältesten christlichen Schulen. Weisseburg 1866. Prof. H. Kühn. Theodor von Mopsuestia und Julius Africanus alsexegeten. Freiburg in Br. 1880. S. 1.—32. Prof. A. d. Harnack в Realencyclopédie für protestantische Theologie und Kirche, herausgeb. v. Prof. Alb. Hanck (3 Ausg.) Bd. I. (1896), S. 592—595.

յետոյ նիկոմիդիոյ Եւսեբիոսը, Կալկեզոնի Մարիոսը, Նիկիայի Թէոփնոսը, Եւգոկիոս, Նումերիոս և Ուրիշները: Բացի Լուկիանոսի այս աներկրայ աշակերտներից, ուրցէ, որանց կուսակից էին և ուրիշ արիոսականներ, որոնք նոյն մեկնաբանական ուղղութեան էին հետեւում, թէև նրանց յարաբերութիւնը Լուկիանոսի հետ չէ էլ կարելի պատմական ճշմարիտ վկայութիւնաների վերաց հաստատել: Դրանց մէջ կարելի է թուել Լէռնատիոս Անտիոքացուն, որա աշակերտ Այետիոս Անտիոքացուն և որտ աշակերտ Անտիոքի Եւնոմիոս սարկաւադին՝ որ իւր ուսուցչից գերազանցեց, Իրակիայի Թէոփորոսին (Թօրակիայում) և ուրիշներին Մեկնաբանութեան պատմութեան մէջ նիկիոյ հաւատորջումների այդ բռլով հակառակորդների մէջ ամենաանշանութրն էր Էմեսոսիայի Եւսեբիոսը, որ ծագմամբ Եղեսիացից լինելով, իւրացրել էր փելիսոփայական և ճշմարիտ գիտութիւնների լայն հասկացուղութիւնը և բարձր ձեւական կրթութիւնը՝ առաջ Ս. Գրոց աստուածաբանութեամբ յայտնի Եղեսսիացում, յետոյ Աղէքսանդրիայում, Կեսարիայում (Եւսեբիոսի մօտ), Սկիւթոպոլիսում (Պատրոփիլոսի մօտ) և Անտիոքում: Լուկիանոսի աշակերտների մասին նրանց հակառակորդները որոշակի հաջորդում են, որ նրանք Արիոտոտելի փելիսոփայութեան հոդի վերայ էին կանգնած. և մեզ հառած Այետիոսի գրական երկերի հատուածները, համարեա, ցոյց են տալիս իւրաքանչեւը սկզբունքի մէջ փոքրիկ Արիոտոտելները. Արիոտոտելի փելիսոփայական հիմունքների գործագութեան մէջ Այետիոս սը գերազանցեց Արիոսին, որ շատ պարզ կերպով երկում է նրա «Աստուծոյ ճանաչողութեան մասին» սկզբունքի մէջ: Նրանք իրենց դաւանաբանական և կրօնական տեսութիւնները մէջ ցոյց են տալիս անողութիւն և ամենավճռական և յանդուգն եզրակացութիւնների առաջ կանգ չեն առնում: Նրանք առաջնորդուում են ուղղակի տեսական-գիտական հետաքրքրութեամբ և կարծէք չգիտեն կրօնական շարժաւութները և չեն ընդունում նրանց իրենց հակառակորդների մօտ. Նրանց համար լոգիկան-կրօնական գիտութեան միակ չափն է: Զգտում են իրենց դաւանաբանական տեսութիւնները անդադրում կերպով անց կացնել մաքուր տրամաբանութեան ճանապարհով և յաճախ ընկում են չոր բանական փելիսոփայութեան (րազիօնալիզմ) ծայրայեղութիւնների մէջ, որոնց վանող օրինակ ներկայացնում են Եւնոմիանները, որոնք գործում էին պարզ-ձեւական լոգիկայի շրջանում և երազում էին հասարակ տրամաբանական գործողութիւնների մէջով չափել աստուածութեան էութիւնը:

Յայց որ Անտիոքի գպրոցը Ս. Գրքի իւր պատմական-քերտական-լոգիկական բացատրութեամբ հերետիկոսական բանական փելիսոփայութիւնից չէ առաջ եկել, և որ նրա հիմքի մէջ զրուած սկզբունքները անպայման հարկագրութեամբ չէին տանում գէպի օտարացումը եկեղեցական վարդապետութիւնից, և գէպի արհամարհները եկեղեցական աւանդութիւններին, այդ մասին արգէն ներկայ շրջանում վկայում են ուղղափառ գործիչները, որոնք պատկանում էին Անտիոքի գպրոցին: Մեկնաբանութեան հիմնական յատ ութիւնների և իւր քրիստոնական աւուղ Անտիոքի գպրոցին, որ առաջինն էր արիոտականութեան գատապարտողներից և գրական հակառակորդ Եւսեբիոս Կեսարացում: Կողմնակից լինելով Ս. Գրքի բացատրութեան Անտիոքի մեթոդին, նա հանգէս է գալիս Արտիենէսի այլաբանական մեթոդի գէմ իւր միտել պահպանուած «Արոգինէսի գէմ մարդարէուհու մասին» շարադրութեան մէջ: Ապա հետեւում են Անտիոքի ուղղափառութեան քաջարի պաշտպան Մելիտիոսը, որ կարեսր նշանակութիւն ունեցաւ ոչ միայն իւր կրթութեան շնորհիւ, այլ և ինչպէս ուսուցիչ Յովհաննէս Ուկերերանի, որին սովորեցնում էր իւր տանը և որի կրօնական գարգացման վերաց նա մէծ ազգեցութիւն ունեցաւ. ապա Դիոսկրոսի ուսուցիչ Անտիոքի Ֆլավիանը, Անտիոքի քրիստոնեների ուղղափառ մասի ճշմարիտ հոգիւը, որը նրան արիոտականութեան գէմ փորձուած մարդ գարձեց և թէ սրան և թէ եկեղեցական վարդապետութեան մէջ միւս օգնականներին մէծ քանակութեամբ փաստեր և ընագորեր տուեց Ս. Գրքից, որոնցով նրանք կարող էին շատ հեշտութեամբ հերետիկոսների որոգայթները ջախջախել:

Անտիոքի գպրոցի պատմութեան մէջ երկրորդ շրջանը ներկայացնում է նրա ծաղկիւը, որ համապատասխանում է այն գիտական վերածնութեան, ինչպէսին որ Ե-րդ գարե երկրորդ կիսին առաջ է գալիս Աղէքսանդրիայի գպրոցում: Այս շրջանի գպրոցը մէծ մասամբ անուանում է Անտիոքի գպրոց: Անտիոքի նոր գպրոցի գլուխ էր անցել Դիոսկրոս վարդապետը, վերջերը Տարսոնի եպիսկոպոս, իսկ նրա աչքի ընկնող ներկայացներն էին՝ Յովհաննէս Ուկերերանը, Թէոգորոս Մոպսուետացիը, որա եղբայր Պոլիքրոնիկոսը, Եստորը, կերպացի Երանելի թէոդորիտը: Նրանց բոլորի աչքի ընկնող յատկութիւնն էր բազմակողմանի աշխարհիկ և փելիսոփայական կրթութիւնը, և համեմատած նախորդ շրջանի հետ, իւրեւ բնորոշ աւանձնաթեան էութիւնը:

յատկութեւն Անտիոքի գպրոցի, հանդէս է դալիս, մի կողմից գրական յարաբերութիւն դէպի Որոգինէսի գիտական աւանդութիւնները, թէպէտ այժմ էլ նրա ներկայացուցիչների կըրթութեան մէջ արխոտառելեան աղջեցութիւնը գերակշռում է պղատոնեանին, միւս կողմից հաւատարմութիւն նիկիական գաւանանքին, որի պղատարանութեան համար նա եռանգուևն կերպով հանդէս եկաւ, զործելով այստեղ միանդամայն համաձայն Աղեքսանդրէոն մէծ հայրերի հետ: Խչ Անտիոքիների քրիստոսաբանութեանն է վերաբերում, այստեղ և, նոյն իսկ Անտիոքի գորոցի այն ներկայացուցիչների մօտ, որոնք գնում էին դէպի նետառականութիւնը տանող ուղղութեամբ, ցոյց են տալի Փորի—Ասիոցի աստուածաբանութեան քրիստոսաբանութեան աւանդութեանց հետեւ այն ձեռվ, ինչ ձեռվ որ նըանք արտայացուեցին Անտիոքի Խւտաթէոսի քրիստոսաբանութեան մէջ, թէպէտ և և Դիբոգորսի և Թէոգորսս Մոպուեսուացու գաւանաբանական Երկերի պատառիկները (ֆրամենտ), որոնք պահպանուել են Նրանց հակառակութների մօտ, հազիւ են ցոյց տալիս նրանց գիտակցական կազմ քրիստոսաբանական աւանդութիւնների հետ, մեծ մասամբ նրանք յենուում են մեկնաբանական և բանաւոր ապացուցների վերաց: Անտիոքի գորոցի աստուածախոսութեան ընդհանուր ուղղութիւնը, որ նրանց ուղիղ մեթոդի գաւանաբաններ և կրօնական փելիսուփաններ է գարձնում և հրապուրում էր ձգտել անց կացնել իրենց գաւանաբանական տեսութիւնները մաքուր ընդդիմախօսութեան միջոցով Եւնոմիանների և Ապողինարիոսի քրիստոսաբանութեան դէմմուած կռիւների առընչութեամբ, կամաց կամաց կազմում էր Նոր Աղեքսանդրեայի քրիստոսաբանութեան այն հակացութիւնը, որը Թէոգորոսի մահից յետոյ Երկու ուղղութիւններին նեստորական վէճի մէջ ընդհարման հասցրեց: Առաջն այստեղ էլ գիտական ձգտումների կրօնական շահերին, Եկեղեցական աւանդութեան հեղինակաւորութեան և Եկեղեցական հաւատոյ գիտակցութեան ձայնին Ենթարկուելը տանում էր դէպի պարզ ուղղափառ քրիստոսաբանական տեսութիւնները (օր. Երանելի Թէոգորիտի մօտ), որոնք Աղեքսանդրիայի գորոցի ներկայացուցիչների քրիստոսաբանական վարդապետութեան հետ ներգաշնակ կապակցութեամբ Թ-րդ տեղերական ժողովի հաւատարոշումների մէջ Եկեղեցական վորդապետութեանը կատարեալ, միակողմանիութիւնից հետու, ազատ յաճախակի բացարութիւններից և աղաւալումներից արտայայտութիւն տուին: Հենց այս շըջանումն էլ վերջնականապէս հաստատուեց որոշ կանոններով Ա. Գրքի

քացալութեան Անտիոքի մեթոդը, որ վճռապէս մերժեց Որոշ գինէսինը ոչ միայն Ա. Գրքի այս կամ այն բացարութեան վերաբերութեամբ, այլ և առանձին իմաստասիրութիւնների մէջ: Աղեքսանդրիայի (յատկապէս Որոգինէսի) և Անտիոքի մեթոդների տարբերութիւնը նրա մէջ չէ, որ վերջնին ներկայացուցիչները ընդհանրապէս մերժում էին հոգեոր զատուդիւնը, որոնք ընդունում էին այդ, բայց աշխատում էին որոշել նրան ոչ թէ տառացի մաքի հիման վերայ, որպէս իսկութիւն: Այն ժամանակ, եթր աղեքսանդրացիները շտտ տեղ միանդամայն բմահաճօրէն Ա. Գրքի որոշ տեղերի հետ կապում էին հոգեոր զատոդութիւնը, անտիօքացիները գործադրում էին տառացի միտքը, ձգտում էին նրան որոշել առողջ մեկնաբանութեան ըոլոր միջոցների օգնութեամբ և յետոյ ցոյց էին տալիս, որ այս կամ այն պատմութիւնը ապագայի ոտուերնէ, Աստուծով հաստատուած պատկեր, որ Յիսուս Քրիստոսի միջոցով իւր իրագործումն գտաւ: Այդպիսով, իսկական այլաբանական միտքը (Աւորիա բայց ոչ ձլլոյցիա) Խօսքերի մէջ չէ, այլ Խօսքերով արտայայտուած իրականութեան, անձնաց և դէպի սէջ է *). Սակայն ինքն ըստ ինքեան պարզ է, որ գործագործութեան մէջ ընդհանուր այս տեսական ոկզբունքը կարող է իրականանալ զանազան տեսակի: Այն ժամանակ երը Թէոգորոս Մապուեստացին Ա. Գրքի բանաւոր հասկացողութիւնը մինչեւ Ժայրացեղութեան է հատցնում, Ա. Յովհաննէս Ուկերերսունը և երանելի Թէոգորիտը հաւատարիմ մնալով Անտիոքի մեկնաբանութեան ոկզբունքներին, իւրացնում են նաև Աղեքսանդրեան գորոցի լաւ կողմերը, վերապահելով հասկացողութեան օրինական մասը այլաբանական բացարարութեանը, և տալիս են գիտական մեկնութիւնների օրինակներ, որոնց գործագործութիւնը իւր էութեամբ ուղղափառ մեկնաբանութեան մէջ անփոփոխ է մնում *): Ա. յդպիսով աստուածաբանական հակառակ ուղղութիւնները, որոնք հարիւր տարուց աւելի կռւում էին միմեանց հետ, քննելի շըջանի վերջը իրենց Եկեղեցական ուղղութիւնների մէջ, և ոչ միայն մեկնաբանու-

*) Prof. A. Harnack, Lehrbuch der Dogmengeschichte, Bd. II. S. 78—79. Anmerk. 3. Prof. H. Kihl., Über Θεωρία und ἀλληγορία nach der verlorenen hermeneutischen Schriften der Antiochener (въ «Theolog. Quartalschr.» 62 (1880.) 4, 531. ff.

*) См. проф. Н. Н. Глубоковский Блаженный Феодоритъ, епископъ киррскій. Его жизнь и литературная деятельность, I.—II, Москва 1890, особенно II, 15—67.

թեան շրջանում, այլ և գաւանաբանական տեսութիւնների
մէջ հաշտուում են:

Ասկայն Դ-րդ գարի Եկեղեցական-պատմական գէպերի
ընթացքը չէ կարելի ամբողջովին գուրս բերել և ուղիղ հառ-
կանալ Աղեքունգրիայի և Անտիոքի գլորիաների ուղղութիւնների
ընդհարման հողի վերայ: Խորասուզուելով այդ շրջանի գաւա-
նաբանական շարժումների հոսանքների և հետզետէ նրանց գար-
գացման մէջ գժուար չէ նկատել, որ նրանց մէջ գլխաւոր նշա-
նակութիւն ունեցել է սիկիոյ հաւատարոշումների այն մեծամաս-
նութեան խումբը, որ իւր կազմութեամբ միատեսակ չէր. նրա
մէջ մտնող տարրերը, ինչպէս ցոյց տուեց հետագայ պատմու-
թիւնը, միմեանց հետ կապուած էին, ինչպէս և աւճառաբակ
հակաւակորդ կուսակցութիւնների մէջ, հէնց միայն ընդգիրմակիրը
կուսակցութեամբ: Եթէ 356 թ.-ի մօտերքը նա ժամանակաւոր
յալթութիւն ձեռք բերեց նիկիականի վերայ և նրա մէջ նեղեն
կազմալուծումն սկսու եց, այն ժամանակ շատ շուտով էլ
պարզուեցին նրա ուղղութիւնները կազմող հիմնական ձգտութ-
ները: Խոկական արիստականութիւնը իւր վերջնական եղբակա-
ցութիւնները Այետիոյի և Եւնոմիոյի անհամանութիւնից
հանեց: Ապա բաժանուեցին Արոգինէսեան ձափակոզմեան
ներկայացուցիչները, որոնք հաւատարիմ էին մնացել Արոգի-
նէսի «սառագրելիութեան» (ցիօրդինացիա), որն առաջ պաշտ-
պանում էր նաև Կեսարիայի Եւսեբիոսը: Կեսարիոյ Ակակիոսի
առաջնորդութեամբ նրանք ընդունեցին «համանմանութեան»
գաւանանքը (=Արգին Նման Հօրը): Դրա հետ միասին Աս-
կեւրիոյ 358թ. ժողովում կազմուեց համագոյսութեան (=Ար-
գին Նման և Էկկից Հօրը) բազմամասդ կուսակցութիւնը, — որի
գլուխն անցան Բարսեղ Անիկիւրացին և Գէորգ Լաւոգիկիացին:
Այս կուսակցութիւնը կամաց միացաւ նիկիական գաւա-
նանքի պաշտպանների հետ և երկրորդ ալեքեղեցական ժողովի ժա-
մանակ վերջնականապէս ձուլուեց սրանց հետ, ըայց առաջուց
իրեն միջից բաժանեց մի խումբ, որ կոչու եց հոգեմարտների
կամ մակեդոննեանների կուսակցութիւն: Հետեւապէս, համագո-
յութիւն ընդունողների մի մասը հակուած չէր Արգւոյ համա-
գոյութեան հետ ճանաչել և ս. Հոգւոյ համագոյութիւնը: Եթէ
աչքի առաջ ունենանք այս վաստը, նմանապէս վիլխովիա-
յական տարրերը համագոյականների վաւերագրերի մէջ (Անկիւ-
րիայի 358 թ. ժողովի արձանագրութեանց մէջ), այն ժամանակ
ընական կինսի եղբակացնել, որ համագոյականների մէջ կային
Արոգինի աղակոզմի աջակողմեան ներկայացուցիչները, որոնցից, գոնեա,
մի մասը չէր կարող ս. Հոգւոյ ստորագրեալ դուութեան մասին

Արոգինէսի տեսութիւնից հրաժարուել*:

Վերջապէս, համագոյականների վարդապետութեան
ընաւորութիւնը, նախընթաց վարդապետական գործունէու-
թեան այն խմբի մի քանի փաստերի առընչութեամբ, որ յե-
տոյ համագոյութիւն ընդունողների կուսակցութիւնը կազ-
մեց, իրաւունք է տալիս նրա կազմութեան մէջ և իւր ուղ-
ղութեան էական տարբերութիւնների մէջ այն որոշ ար-
տայայտիչներին տեսնել, որ ներկայացնում է ս. Դոհնէսոսի և
Մեթոգիոսի աստուածաբանութիւնը. վերջինը վկայում էր նրա
կենսունակութեան մասին հէնց ալիսուական վէճերի սկզբին:
Սյո ուղղութիւնը, ի հարկէ, չանցյատացաւ, այլ ոկոււած
կուիւը նրա ներկայացուցիչներին, որոնց թիւը շատ մեծ էր,
տախակեց լրենց մասնակցութիւնն ու ազդեցութիւնը բացա-
յացմել նիկիական արիստական շարժումների շրջանի մէջ: Սյո
խիստ պահպանողական ուղղութիւնն էր, որ ոչ թէ մերժում էր
աստուածաբանական գիտութեան նշանակութիւնը, այլ սահ-
մանափակում էր նրան, չէր թոյլ տալիս իւր վարդապե-
տութիւնը վիլխովիայական աստուածաբանական
տեսակէտով և չէր արտայայտում նրան վիլխովիայական
աստուածաբանական բանաձեռների մէջ, այլ անհրաժեշտ էր
համարում հաւատարիմ մնալ աւանդութեամբ ստացածին,
խոստովանել այն, ինչ որ ոռոգորեցնում էր նիկեղեցական աւան-
դութիւնը իւր հանգանակների մէջ: Աստուածաբանական մտքի
այս աեստիկ ներկայացուցիչները կազմում էին առաջին տիե-
զերական ժողովի անդամների մեծամասնութիւնը. նրանք մեր-
ժում էին արիստականութիւնը, ինչպէս հերետիկոսութիւնը, ու-
կային և կասկածաներով էին նայում նոր բանաձեռներին և հասկացո-
ղութիւններին, որ մտադրուած էր հաւատոյ մեկնաբանութեան
մէջ մտցնել, համարելով այդ վտանգաւոր նորամուծութիւն,
էին գաղափարներից հեռացումն: Նրանք ընդունեցին նիկիական
հանգանակը, ստիկայն ժողովից յետոյ շատ շուտով երեսում են
նիկիայի հակառակորդների շարքում, գտնելով, որ ծօսօսուօչ
բանաձեռը գայթակեցուցիչ և վտանգաւոր է. նրանք նիկիական
որոշումները եկեղեցւոյ իսկական վարդապետութեանը համե-
մատ հաւատոյ ճիշտ արտայայտութիւն չէին համարում:
Աստուածաբանական այս ուղղութեան եպիսկոպոսները 341
թուի Անտիոքի ժողովում արգէն մեծամասնութիւն են կազ-
մում, որտեղ, նիկիական հանգանակին հակառակ առաջ

* Սպառական Օրիգեն օ Տ. Դյոխ, սմ. Եւ Առաջական Որոշ.
B. B. Բոլոտով. Սպառական Օրիգեն օ Տ. Տրուպ, ստ. 364 և.

Է մկւում հնութեան հեղինակաւորութիւնը, այն, ինչի որ հենբ սկզբից հաւատալ սովորեցին: Յետոյ նրանք համագոյականների կուսակցութեան մէջ մտան: Զնայած նիկեական հանդանակե և նրա պաշտպանների դէմ եղած կռուին, ամբողջ ժամանակ նրանք խիստ եկեղեցական պահպանողական հողի վերայ էին կանգնած, որ ապացուցւում է երկրորդ Տիեզերական ժողովի ժամանակ ուղղափառներէ հետ անպայման միութեամբ. Երբ, Կապագութիւնից հայրերի աստուածաբանական երկերի շնորհիւ պարզուած էր, որ «համագոյութիւնը» չէ ամսում դէպի ուաբելականութիւն: Յդք աստուածաբանական ուղղութեան իբրև խիստական ներկայացուցիչ հանդէս է գալիս ու. Կիւրեղ եւուս ապէմացին: Իւր հօրապարակական վարդապետութեանց մէջ, որ արտասանուել են 348-ի մօտերքը, նա ոչ նիկեական հանդանակը և ոչ օրոսաւունք դորժ չէ զնում, այլ նրանց իբրև նիմք զնում է Երուսաղէմի եկեղեցւոյ հանդանակը, զդուշացնելով ունկնդիրներին, որ այդ հանդանակը մարդկային ձեռքի արգելուք չէ և որ նրա իւրաքանչեւը խօսքը կարելի է ու. Գրքով հաստատել: Ս. Գրքին համեմատ լինելը բաւական է: Նա շատ խիստ կերպով վիճումէ Սարկեանոսի դէմ*, որին կառկածում էր սաբելականութեան մէջ, մերժում է նմանապէս արիստականներին, ուակայն առանց պարզ ցոյց տալու նրանց: Վարդապետութեան առանձին սկզբունքների մէջ նա խելացի փաստեր բերելուց չէ հրաժարում, ուակայն նա շէ տալիս այն, ինչ որ կարող էր յիշեցնել վարդապետութեան սիստեմը և չէ ցոյց տալիս նոյն իսկ ձգտումն գէպի այգ: Նրա կատեխիզական վարդապետութեանց մէջ չի կարելի որ և է փիլիսոփայական դպրոցի ազգեցութեան ամենափոքրին հետք անդամ դանել—նա ամէն տեղ և ամենուրեք մնում է ճշմարիտ եկեղեցական գորդ ութիւնը: 359 թ. Սելեկիայի ժողովում նա հանդէս է գալիս համագոյականների շարքում, իսկ երկրորդ տիեզերական ժողովում մամնակցում է որպէս միանդամայն նրա անդամներից մէկը: Ս. Կիւրեղ Երուսաղէմացու հրահանդները իբրև անդամատելի փաստաթղթեր, հաստատում են այն երողութիւնը, որ նիկեական հանդանակի հակառակորդների մէջ կային եպիսկոպոսներ, որոնք չին համարձակուում գործ գնել նիկեական հանդանակը, համարելով նրան ոչ ճշմարիտ իւրական առաջական ուղղութիւնը:

Ասաւ ածաբանական զիտութեան մէջ վերին աստիճանի առանձնայատու կ զիրք բռնեց Մարկեղիանոս Անկեւացին: Սա միանգամայն մի կողմը մնաց եկեղեցական աստուածաբանական գիտութեան այն յուզմանըներից, որ աեզի էին ունենում Երինեսուի ժամանակին սկզբանութիւնը ազատ. Մարկեղոսը ազատ էր այն բոլորից, ինչ որ նորագոյն աստուածաբանութիւնը տալիս էր նա բոլորում էր զրադաշտ կէմ: Նա ոչ միայն ուղղում էր Յօրագինէսին, այլ նրանից էլ յետ գնաց—մինչև Երինէսու և նոյն իսկ Խնատիսու: Մարկեղոսը զինւում է աստուածաբանական բաղման մեթոգների դէմ և նրանց հիմնական մէղքը տեսնում է Պղատնոնով և Ընդհանրապէս Փիլիսոփայութեամբ հրաժարութիւնուուն իսկ գէմ էր հոգեւոր հայրերի հեղինակաւորութեան համար բերած անուրոցին: Ապկայն Մարկեղոսը անուանաբեկց իւր բոշ փառուերին*: Ապկայն Մարկեղոսը անուանաբեկց իւր սեպհական մեթոգը այն հերետիկոսական մեթոգով, որից նրա աշակերտ Փօտը, Ճայրայեղ եղբակացութիւններ արտ: Աստուածաբանական այս ատօրինական մտածողի իխուտ ու շացած տեսութիւնները քիչ հետեւողներ ունեցան և զօրեղ Ընդդիմութիւններ առաջ քերին կեսարացից Եւսեբիոսի և Ակակիոսի, Էմիսացի Աւաերիսոսի և Բարսեղ Ուծի կողմից: Նիկեոյ Տիեզերական ժողովում նա խիստ կերպով պաշտպանում էր «համագոյութիւնը» և Փօտովից յետայ նրա հաւատորաշուների պաշտպանների շարքում նշանաւոր տեղ բռնեց: Նու վայելում էր Նիկեացիների համակարգանքը, ուստի և իւր գայթակղութիւններովը շատ գիտարութիւնների մէջ ձգեց ուղղափառներին, հաստատելով նրանց հակառակորդներին այն համոզմունքի մէջ, թէ Նիկեոյ գաւանաբանութիւնը առանում է գէպի սաբելականութիւն:

Մինչև այժմ մենք խօսեցինք այն աստուածաբանական ուղղութիւնների մասին, որնք հանդէս եկան դաւանաբանական վիճերի մէջ, որ բռնում էր քննելի ամբողջ շրջանը, որի ներկայացուցիչները զարգացին աստուածաբանական—գրական գործունէութիւն գլխաւորապէս ժամանակի հարցերի շրջանակում: Ապկայն Դ. գարի Երկրորդ կիսին գիտական կենդանութիւն առաջ եկաւ Ժամանակակից հետաքրթացութեամբ զարթնած ոչ միայն սկզբունքների աւելի խոր և լայն կերպով առաջ քերելով, որի մէջ

* Prof. Th. Zahn. Marcellus von Aneyra. Ein Beitrag zur Geschichte Theologie Gotha 1867.

պարզապէս երեսւմ է ձգտումն քրիստոնէական հոգի վերաց խօսքի ամենալայն մտքով գիտութիւն ոտեղծելը, որը հին փիլիսոփայութեան օգնութեամբ գոյութեան բոլոր կողմնի վեսայ լոյս սփռել կարողանալ: Այս ուղղութիւնն ունին անպայման Դիկիմուը, Բարոնդ Մէծը, Ապողինարիսուը, Անտիոքացիք և առանձնապէս Գրիգոր Նիւսացին: Այդպիսի հոսանք երեսւմ է մի անձնաւորութեան մօտ էլ, որի մասնակցութեան մասին ժամանակակից դաւանաբանական կոլիւների մէջ լուսութիւն է պահուած այն է, էմիսիայի (փիւնիկիայում) եղիսկապս նեմիզիսի մօտ, որ Գրտի վերջին կամ ն-ըդի սկզբին գրել է «Մարդկային ընութեան մասին» (περὶ φύσεως ἀνθρώπου) շարագրութիւնը: Այդ հոսանքը նշանաւոր է ոչ այնքան քրիստոնէական փիլիսոփայութեան պատմութեան մէջ իւր նշանակութեամբ, որքան իւր ընաւորութեամբ և որա հիմքում եղած ձգտումներով: Նեմիզիսի աշխատութիւնը շատ կողմերով կապուած է հին փիլիսոփայութեան հետ, այնտեղ մենք գտնում ենք նրա տերմինոլոգիան, վարդապետութիւնը և կարծիքները մշակուած մի ամբողջ սիստեմի մէջ և թափանցուած քրիստոնէական ոգով: Նեմիզիսը իւր աշխատութիւնների համար նիւթ վերցնում է զանազան ուղղութիւնների ներկայացնուցիչներից, այսպէս՝ Պատոնից, Արիստոտելից, Էպիկուրեց, ստոյիկեաններեց, նոր պղատոնականներեց, Գալանուսից, սակայն և պարզապէս նախամեծարութիւն տալով Պատոնին և նոր-պղատոնականութեանը: Նա սօվորում է նրանցից այն, ինչ որ օգտակար էր իրեն, որպէս զի մարդու ընութեան համար աւելի ուղիղ և կատարեալ հայեացք կազմել կազողանայ: Բայց մի և նոյն ժամանակ նա հաւատարիմ է մնում քրիստոնէական վարդապետութեանը, ձգտում է երկուսն էլ համաձայնեցնել և միացնել միմեանց հետ, այն համոզմամբ, որ բնական և բացարձակ ճշմարտութիւնը միմիանց հակառակ լինել չեն կարող: Ամբողջ ժամանակ նա մնում է քրիստոնէական հաւատի շրջանակի մէջ, երբէք չէ անցնում նրանից և քրիստոնէական վարդապետութեան հետ հակառառութեան մէջ չէ մտնում: Այսպիսով, չնայած նեմիզիսի վարդապետութեան մէջ մտած տարբերի զանազանութեան, քրիստոնէական կրօնը նրանց ներդաշնակութեամբ կապում է և ամբողջ ոկոտեմին հիմք է տալիս*: Աւելի պակաս յաջողութիւն գտաւ Պատղեմանների եպիսկոպոս Սինեղիսուի հեթանոս փիլիսոփայութիւնը քրիստոնէութեան հետ միացնելու փորձ:

* Domanski B. Die Psychologie des Nemesius. Münster 1900.

Հոգով ճշմարիտ քրիստոնէայ լինելով, նա չկարողացաւ երբէք քրիստոնէական վարդապետութիւնը համաձայնեցնել պղատունական փիլիսոփայութեանը. Նրա երկերը կրում են ոինկը տիզմի ընաւորութիւն—այն է՝ խառնուրդ հեթանոսութեան և քրիստոնէութեան: Խթէ աչքի առաջ ունենանք, որ Սինեղիսուը բացառիկ երեսոյթ չէր կազմում, այն ժամանակ անհրաժեշտ է ընդունել, որ նա ներկայացնում է «հետաքրքիր օրինակ նոր պղատոնականութեան և քրիստոնէութեան այն համաձայնեցման» (առօմոදացիա), որով քրիստոնէական և նոր պղատոնական տեսութիւնները այնպէս էին խառնուրդ միմիանց հետ մարդու զիտակցութեան մէջ, որ ոչ իրեն համար և ոչ կողմնակի հետախուզացի համար, համարեա, հնար չկար նրանց մէջ սահման գտնել» *:

Արիստական զանազան խմբակցութիւնների մէջի երկարատե կուները ասաւածախօսական միտքը պահպանում էին խիստ լարուած զրութեան մէջ և նրա զօրեղ գործունէութիւնը վերին աստիճանի խիստ կարեւոր հետեանքներ տուեց բացատրելու, բայցայտելու և հաստատելու համար եկեղեցական ճշմարտութեանը: Աակայն հերետիկոսական շարժումների անդապար բռնկումները առաջացնում էին երկիւղ և ստիպում էին նրանց պատաճառները վնասելու: Բնականաբար միտքն ուղղուում էր գէպի այն անձնաւորութիւնը, որի գործունէութիւնը հէնց սկզբեց առաջ էր բերում որքան զօրեղ ուր նոյնքոն էլ ոչ պակաս ատելութիւն—այն է Ողէքսանդրիայի ուսուցիչ Որոգինէուը, նրա անունն արգէն կապուում էին արիստական հերետիկոսութեան հետ, մանաւանդ որ իրենք արիստականները իրենց վարդապետութիւնը հաստատելու համար յենուում էին Որոգինէուի վերաց: Եւ իսկապէս պակաս չէին այնպիսի կէտեր: Այնտեղ չափաւոր արիստականութիւնը մօտենում էր Որոգինէիզմին և կարծէք թէ ներկայացնում է նրա զարդացման շարունակութիւնը: Որոգինէուի գէմ, երբև արիստական հերետիկոսութեան հօր և ժամանակի բոլոր գայթակղութիւնների մեղաւոր Դուռդ գարի վերջին բարձրացնում է իւր հօր ձայնը Ափրոսի գիտական եպիսկոպոս նպիտանը, որ հանդէս է գալիս իրեւ ներկայացնուցիչներ ունէր եպիսկոպոսների, կղերիկոսների, կրօնաւորների և աշխարհականների մէջ և ողբիլիսովայութեան

* Остроумовъ А. А., Синезій епископъ птолемандскій. Москва, 1879, стр. 12. Glover T. R. Life and Letters in the fourth Century, Cambridge 1901 № 320—356:

հողի վերայ զբեց աստուածաբանական գիտութեան իրաւունքի վճռական հարցը, և անցկացրեց միակողմանի աւանդութիւնը: Նա աստուածաբանական ոչ մի գլուխոցի չէր պատկանում, այլ լոկ ուղղափառ գրող էր, որ ուղիղ գծով անց էր կացնում ժայռայեղ աշակամեանների ձգտումները: Նա ինքնուրոյն գրող չէր և վախենում էր ինքնուրոյն լինելուց, ո. Եպիփանը ձգտումէ համտատել իւր գիտական միտքը, ինչպէս խարիսխի, անպայման ճշմարիտ հիմունքների վերայ, ընդունումէ միայն համտատում եղակացութիւններ և երես գարձնում այն վերացականութիւնց, որ աստուածաբանական ոկզբունքներէ գնում և աշխատում նրանց վճռելու ինքը շատ յաճախ բերումէ ո. Աթանասի և Կապագովիկայի հայրերի տեսութիւնները: Հաւատաց դործերի մէջնա ոչ մի զիջումն չէ ճանաչուած, և կարծիքի ու իսկական գայթակղութեան մէջ, Որտինէսի անպայման հետեւողների և նրա գիտութիւնը յարդողների ու արդիւնաւոր գիտական գործունութեան մէջ ոչ մի ասքերութիւն չէ գնում: Եպիփանի Պաշնարիայի մի ընդասձակ մասը երեան է գալիս իրեն եկեղեցական աւանդութեան առաջնական աշխատութիւն Որոգինէսի դէմ, որ բացումէր մէծ կռիւ եկեղեցւոյ մէջ աստուածաբանական գիտութեան դէմ: Խոկապէս այստեղ լոսքը Ոսոգինէսի մասին չէ, որին ո. Եպիփանը ազատ իմաստուն, խոզն ու փռուած մարդէ անուանում, որ զուր տեղը ագամանեաց կոչումն է իւրացքել, այլ հելլենական կրթութեան մասին է, (չէլացչի ուսնօ), եկեղեցական աստուածաբանական գիտութեան այն ուղղութեան մասին, որի իսկական նախաճայր անուանում են Որոգինէսին: «Ո՞քան զու ինքդ վնասուեցիր և ո՞քան ուրիշներին վնասուեցիր—դոչում է Եպիփանը: Ե՞նչպէս զու խամսուած ես սարսափելի շարանենգութեամբ, այսինքն հելլենական կրթութեամբ և ուրիշների համար էլ զու թոյն գտրձար»: «Դու, Որոգինէս, կուրացնելով քո միտք հելլենական կրթութեամբ, ժայբէքեցիր թոյնը նաև քեզ հաւատացեալւների վերայ և նրանց համար թունաւոր կերակուր գարձար, վնասելով նաև ուրիշ շատերին նրանով, ինչից որ ինքդ էր վնաս կրել»*: Նա արհամարհանքով է խօսում այն յանդքանութեան մասին, որով Որոգինէսը պարձենում էր հետախուզել անքնելի առարկաները, երկնային երեր փնտրել և բացատրել ամեսդ ո. Գերքը, որը և նրան խորին անկման հասցըց**:

* Гл. 68, 73. Русск. пер. 1872 г. ч. 3 стр. 206, 221—222.

** Гл. 8 и 3. Русск. перев. ч. 3. стр. 98, 83—84.

Սուանձնապէս խիստ կերպով ո. Եպիփանը յարձակուում է ո. Գրքի բացատրութեան այլաքանական մեթոդի վերայ: Սակայն Որոգինէսի հեղինակաւորութիւնը, որ գիտական աստուածաբանութեան համար նշանաբան էր գարձել, եկեղեցւոյ մէջ շատ մեծ էր: Զնայած այդպիսի նշանաւոր մարդու կողմէց, ինչպէս էր ո. Եպիփանը, նրա դէմ մզած կռուեն, և Հոռվմի ու Աղեքսանդրիայի (399թ.) ժողովների բանագրանքներին, նրա նշանակութիւնը անգրդուելի է մնում համարեա եկեղեցական լայն շրջաններում նոյն իսկ Ե. թղ. գարի առաջեն կիսին, ինչպէս այդ կարելի է տեսնել Սոկրատի «Եկեղեցական պատմութիւնց»*:

Այդպիսով շրջանի վերջը եկեղեցական աստուածաբանական գիտութեան մէջ պարզ կերպով արտայայտուած երկու ուղղութիւններ մնացին—Աղեքսանդրիայի և Աստիորի, երկուսն էլ մեղմացած գրութեամբ, և որպէս նախացուցմունք ապագայի նկատմամբ, միակողմանի աւանդական հոսանք աստուածաբանական գիտութեան դէմ իւր ընդգեմագիր կուսակցութեամբ:

—————
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԱՐԱՏԻ ՎԱՐԴԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԱՐԱՏԻ ՎԱՐԴԱՐ
—————

* См. напр. III. 23, VI. 7; VI. 13; VII. 6.

III.

Դ. — Ե-րդ գարերի աստուածաբանական դիտութեան աճքի ընկնող տարբերութիւնները աղբիւրների եւ զիտական միջոցների դորձադրութեան մէջ դէպի ո. Գիրքը, եկեղեցական տւանդութիւնը եւ ժամանակակից փիլիսոփայութիւնը եղած յարաբերութիւնը. կրօնական դիտակցութեան կենդանութիւնը եւ հետախուզութեան աղատութիւնը. — Վերջնական եղացացութիւններ աստուածաբանական դիտութեան ներկայ ժամանակում բնական գարդացման պայմանների վերաբերութեամբ:

Եթէ այժմ մենք դառնանք յատկապէս եկեղեցական աստուածաբանական գիտութեան նշանաւոր ներկայացուցիչների երկասիրութեանց բովանդակութեանը, այն ժամանակ, նաև և առաջ կտեսնենք, որ նրանք գարմանալի կերպով կատարելապէս բազմակողմոնի կերպով օգտուել են բոլոր աղբեւըներից և միջոցներից, որ պահանջում էր նաև եկեղեցական աստուածաբանութիւնը իւր էութեամբ և նրա ժամանակակից պահանջներով ու խնդիրներով, միևնույն ժամանակներանց նշանակութեան այնպիսի համեմատական գնահատութեամբ և այնպիսի ներդաշնակ միութեամբ, որոնք շատ բաների մէջ առանձնապէս այդ շրջանի աստուածաբանական գիտութեան ոեպհականութիւնն են կազմում:

Աստուածաբանական գիտութեան աչքի ընկնող այս գիծը նրա աստուաշնչական բնաւորութիւնն է. աստուածաբանութիւնը առանձնապէս հիմնուում է ո. Գրքի վերաց: — Ս. Գիրքը, ներշնչուած աստուածային խօսք է, կրօնական գիտութեան միակ ճշմարիտ աղբեւը և ամենաբարձր հեղինակաւ որութիւնը վարդապետութեան մէջ: Ս. Գիրքը և սովորեցնում և հաստատում է հաւատի մէջ, քրիստոնէական գիտութեան համար ինչպէս և ամէն տեսակ վարդապետութեան փորձութեան համար անպայման հաստատուն յայտանշան և հաւատի նիւթ է տալիս. նրանով է չափուում իւրաքանչիւր աստուածաբանական երեոյթ և նրանով հերքուում ամէն մի մոլորութիւն: Այս շրջանի բոլոր գրողները ճշտութեամբ կատարուում էին Որոգինէոի պատուէրը — կարդալ և կարգալ ո. Գիրքը. ինչպէս Ոերեկան —

ասում էր նո, — ամենայն օր գալիս էր ջրհորի մօտ ջուր վերցնելու, այդպէս էլ մենք պէտք է փութանք ո. Գրքի աղքեւով՝ ո. Հոգւոյ ջրի մօտ և միշտ այնտեղից մեր ջրամանները լցնելով՝ տանենք մեր տուն¹: Նրանք ո. Գիրքը գործադրում են իրենց աշխատասիրութիւնների մէջ ամենալայն կերպով, — թէ վարդապետական — վիճաբանական և թէ բարոյական շարադրութեանց մէջ. բերում են ամբողջ կտորներ ո. Գրքից, կարծէք չընկատեւով, որ իրենք ասում են Գրքերի խօսքելով, հիմնում են իրենց փաստերը բազմաթիւ պիտաների վերաց, բերում են բազմաթիւ համանման տեղեր, այնպէս որ նրանց գիտնականութիւնը ո. Գրքի ոկզենական աղքեւըների մէջ առաջ է բերում արգարացի զարմանք, — նրանք ապրում են ո. Գրքով և որ ամենազլիսար որն է, նրանից՝ իրենց աստուածային իմաստութեան և յայտնութեան վրկութեան աղքեւըց գործարանապէս գուրս են բերում և զարգացնում քարտպէտ վարդապետութիւնը: Եւ ոչ միայն ուղղափառ հաւատի պաշտպանները, այլ և հերետիկոնները, և ամենից առաջ արքուուականները, իրենց կարծիքները համոզեցուցիչ կերպով հաստատելու համար ո. Գրքից կտորներ էին բերում: Առաջին Տիեզերական ֆողովում մէծ ջանք գործ գրուեց, որպէսպէս ո. Գրքի տերմինների մէջ արտայայտուի Աստուածոյ Որդուոյ՝ իւր Հայը Աստուածոյ հետ ունեցած յարաբերութեան վարդապետաթիւնը, և «Համագոյութիւնը» պահպանողական աստուածաբանների կողմից ընդգիմախոսութեան էր ենթարկուում հէնց նրա համար, որովհետեւ այդ տառացի կերպով ո. Գրքում չէ գտնուում: Ի. և Ե. ըգ. գարերի գրողները երբեմն այնպիսի կարծիք են յայտնում, որպէս թէ, նրանց կարծիքով, միայն ո. Գիրքը բաւական է սովորելու համար այն, ինչի որ մարդ պէտք է հաւատաց: Ա. Աթանասին ասում է, որ գրութիւնները սուրբ են և աստուածաշունչ, բաւական են ճշմարտութիւնը որոշելու համար²: Եւստաթէսս Անտիռքացին գրում է, որ միայն Աստուածոյ խօսքերն են յուսալի հաւատը իսկապէս հասկանալու և հաստատելու համար Յ. «Ուրիշ ուսուցչի մի՛ սպասիր, — ասում է ո. Յովհաննէս Ուսկեբերանը. գու ունիս Աստուածոյ խօսքը, — ոչ ոք քեզ այնպէս սովորեցնել չէ կարող, ինչպէս նա ... Ս. Գրքի չճանաչելուց առաջ է գալիս ամէն շարիք ... հատ հեշտ է

1. Homil: in Genes. X: 87; XI, 91.

2. Слово противъ язычниковъ 1: русск. перев. изд. 1851 г. т. I. стр. 5, 9. соборахъ, 6: русск. пер. изд. 1903 г. ч. 3. стр. 97.

3. De engastrimytho, 7.

ազատուել Գրքերով, իսկ առանց նրանց անկարելի է»¹: Որպեսզի ապացուցութիւնը յուստիլի լինի, պէտք է հաւատատել ու Գրքով²: Հաւատի ոչինչ բան չկայ քան և Աստուածային դիւրը³: «Ամենադլխաւոր ճանապարհը, որով փնտրում ենք այն, ինչ որ մեր պարտքը մեզ ստիպում է, աստուածաշունչ գրքերի ուսումնասիլութիւնն է... Խնձի մէջ որ մարդ իրեն թերուս զգաց, զբաղուելով ու Գրքով, ինչպէս ընդհանուր բուժարանում, դժուում է իրեն ոկարութեան հարկաւոր բժշկութիւնը⁴: Նրանեւի թէոգորիաթը գրում է, որ նրա համար միայն ու Գիւքն է համոզեցուցիչ⁵, և իրօք օգտուում է նրանից ամենաալայն չափով: Ս. Գրքի այսպիսի նշանակութեան պատճառով աղքամնգրիացի Ոթանասը Նիկիոյ ժողովի հաւատորոշումները ընդունումէ ուղղի միայն այն պատճառով, որովհետեւ այդ հիմնուածէ ու Գրքի վերայ: «այն հաւատը, որ ժողովը խօսուավանց ու Գրքի հիման վերայ, է ընդհանրական եկեղեցւոյ հաւատը»⁶: «Տիրոջ ճշմարիտ և սուրբ հաւատը պարդ է բոլորի համար. նա ճանաչւում է իմացւում է աստուածային Գրքերից. գրան գաղտնի հաւատացող սուրբերը (Նիկիոյ հայրերը) մարտիրոսներ գարձան»⁷: Ս. Կիւրեղ Երուսաղէմացին իւր կատենիկական զրոյցների մէջ բացատրում է քրիստոնէական հաւատը իւր եկեղեցւոյ հանգանակի հիման վերայ, սակայն արտայայտումէ և այն համոզումն, որ ինքը ներկայացնումէ ու Գրքի ճշմարտութիւնների համառօտ բացատրութիւնը⁸: «Հաւատի աստուածային և սուրբ գաղտնիքների մասին, ասում է նա, — չըպէտք է սովորեցնել առանց որ և է աստուածային Գրքի և ըստ գրաւուել պարզ հաւատականութեամբ և բանականութեան փաստերով: Նոյն իսկ պարզապէս մի հաւատար և ինձ, որ այս բանը ասում եմ քեզ, եթէ այն բանի համար, ինչ որ հաղորդում եմ, աստուածային Գրքերի մէջ ապացոյց չես գտնել:

1. Толкование на послanie къ колоссянамъ IX, 1: русск. пер. т. XI; стр. 432.
2. О покояніи, VIII. 3: т. II. стр. 382.
3. Бес. на псал. 3: т. V. стр. 7.
4. Восилія вел. письм. къ Григорію Богослову: русск. пер. т. 6. стр. 11.
5. Еран. 1: MPG, 83, 48.
6. Объ опредѣленіяхъ никейскаго собора 27: русск. перев. изд. 1451 г. т. I. стр. 342.
7. Къ Іовіану 1: русск. перев. изд. 1903 г. ч. 3. стр. 175.
8. Огласит. сл. V, 12.

Որովհետեւ հաւատի հենց մեր վրեկութիւնը ոչ թէ հնարուած խօսքերի վերայ է հիմնւում, այլ աստուածային Գրքերից քեւած ապացոյցների վերայ¹:

Ս. Գրքի եկեղեցական աստուածաբանութեան համար ուսնեցած այսպիսի նշանակութեամբ է բացատրուում, թէ ինչո՞ւ այդ շրջանի գրադներից այդքան շատ մեկնութիւններ են մնաւցել: Ո.մէնազլմաւոր գպրոցները առանձնապէս մեկնաբանական գպրոցներ էին: Բացատրութեան մեթոդին մեծ նշանակութիւն էր արւում:

Մակայն եկեղեցական աստուածաբանները ոչ պակաս հաստատութեամբ առաջ են մցում գաւանաբանութեան ճշմարտութեանց և եկեղեցական կեանքի չափը բացայացելու գործի մէջ և միւս աղքեւրը և ձեռներէց սկզբնաւորութիւնը, այն է եկեղեցւոյ մէջ և առաքելական հայրերի մօտ պահպանուած աւանդութիւնը: Նրանց երկերի մէջ շարունակ պատահում են ցուցմունքները «առաքելական հաւատի», «եկեղեցական վարդապետութեան», «սկզբնական աւանդութեան, վարդապետութեան և ընդհանրական եկեղեցւոյ հաւատի» համար, որոնք ամէնուըք համառման են, որովհետեւ եկեղեցւոյ հայրերը միատեսակ էլ հազոր գել են: Դաւանաբանական վարդապետութեան բացայացելը, բացատրելը և հաստատելը, պատարագի և ծիստակարութեանց բացատրութիւնը և այն այդ շրջանի գրողներին աւելի էր գրգում, քան իրենց նախորդներին, հաստատուն մնալ առաքեալներից իրենց հասած բերանացի վարդապետութեան աւանդութեան վերայ: Նրանց կասթեցով աւանդութեանց ցուցմունքը նոյն իսկ բացատրում է այլեւ որ և է ուշից ապացոյց բերելու անհրաժեշտութիւնը: Դաւանաբանական մեծ կռուի մէջ իրանք աննկատելի կնրապով ու Գրքի ապացոյցներից անցնում են աւանդութեան վկայութեան: Նրան յարգում են իրեւ «կանոն» ու Գրքը հառկանալու համար և եթէ մասնաւորութիւնների մէջ նրա բացատրութիւնները չէ որոշում, դրա վոխարէն գործադրութիւնը յարմարեցնուումէ դաւանաբանութեան: Ուանդութեան այսպիսի նշանակութեան մասին եղած այնքան եռանդուն յայտարարութիւններից յետոյ, կարող է միտք ծագեցնել հակառակ կամ գոնեա, անորոշութեան մասին և հետեապէս հարց առաջ շրջանի եկեղեցական աստուածաբանների հայեացը երկու աղքեւրների և հեղինակաւորութեան մասին: Սա նշանակութեան և փոխադարձ յարմարեցնութեան մասին:

¹. Огласит. сл. IV. 17.

կայն, նրանց համար այդպիսի հարցեր գոյութիւն չունեին. ցոյց տալով աւանդութիւնը, նրանք ըողոքում էին ընդհանուր եկեղեցական գիտակցութեան դէմ, ինչպէս որ նա եկեղեցւոյ վարդապետութեան մէջ, որա հաստատութեանց և կազմակերպութեանց կրօնական ծէսերի և սովորութիւնների մէջ արտապահառածուած էր. նրանք շատ պարզ կերպով իրենց ներկայացնում էին այն ճանապարհները, որով եկեղեցական աւանդութիւնը հասցնում էին մինչև առաքեալները, իսկ եկեղեցւոյ գործների երկերի մէջ երենց հայեացների ճշմարտութեանց համար հաստատութիւն էին գոյնում: «Տեսնենք, — ասում էր Ա. Աթանասը, — սկզբնական աւանդութիւնը, վարդապետութիւնը և ընդհանրական եկեղեցւոյ հաւատար—, այն հաւատար որ Տէրը հազորդեց, քարոզեցները, պահպաննեցները եկեղեցւոյ հայրեւը: Արովհեաւ ճէնց դրա վերաց է հիմնուած եկեղեցին, և ով հեռանում է նրանից, նա չէ կարող և նոյն իսկ քրիստոնեաց կոչուել¹: Ա. Գրիգոր Նիւսացին գրում է. «Թող ոչ ոք չպահանջէ ինձանից մեր ճանաչածը հաստատել փաստերով, որովհետեւ մեր վարդապետութեան ապացուցութեան համար բաւական է ունենալ եկեղեցւոյ հայրեւից մեզ հասած աւանդութիւնը, որպէս մի ժամանակութիւն, որ ստացուած է անմիջապէս առաքեալներից յաջորդ սուրբերի միջոցով»²: Շատ պարզ է, որ նրանց համար ինչպէս ա. Գրիգոր, այնպէս էլ աւանդութիւնը հանդէս են գալիս միենոյն ազգեւրից ծագած, որ միմիանց հաստատում և բացատրում էին: Ուստի և հակասութեան մէջ շընկելով նրանք հաստատում էին, «որ թէ մէկը, թէ միւսը համահաւասար ճշմարիտ են»³, որ թէ մէկը, թէ միւսը բարեպաշտութեան համար հաւատար ոյժ ունեն⁴: Եկեղեցւոյ մէջ պահպանուած առաքելական այս աւանդութեամբ նրանք այնքան լայն կերպով օգուտ քաղեցները, իրենց գորուածքները այնքան առատութեամբ հարստացրին, միենոյն ժամանակ ցոյց տուին այնպիսի խորը թափանցումն նրա հոգու մէջ, որ այս շըջանի սուրբ անձնաւորութեանց երկերը յաջորդ սերնդի համար հանդէս են գալիս ամենահարուստ և առաքելական աւանդութիւնից ծագորդ ամենագլխաւոր աղբեւրի: Ուստի և, եթէ հարկ լինի անհամաձայն աղբեւրների և սովորութիւնների մէջ

¹ Կէ Սերապիոն 1- 28: ռուս. թար. առ. 1903 թ. չ. 3. ստ. 41.

² Պրոտ. Եվնոմիա, հ. IV. ռուս. թար. չ. 5. ստ. 481.

³ Հ. Յօանն Զլատուստ, տոլկօ. հա 2 Թէս. IV. 2. ռուս. թար. առ. XI. ստ. 601.

⁴ Վասիլի վել. օ Ս. Դյոխ. 27. ռուս. թար. չ. III. ստ. 269.

ընտրութիւն անել, այն ժամանակ ո. Գրիգոր պէտք է դատաւոր լինի, «և ում վարդապետութիւնը Աստուծոյ խօսքին համաձայն լինի, անկատած, նրա կողմը կը լինի և ճշմարտութեան ձայնը». (Տ. Վասիլի վել., ուս. 181 [189]: ռուս. թար. գ. 7. ստ. 20),

Ա. Գրիգոր, աւանդութիւնը հիմք են ժառապում և եկեղեցական վարդապետութեան համար ըոլոր անհրաժեշտ տարբեր տալիս: Սակայն եկեղեցական աստուծաբանն գիտութիւնը, որպէս զի օգնէ եկեղեցւուն իւր նպատակին հասնելու համար—այն է՝ յաջող նոր պայմանների մէջ յազմութիւն տանէ հեթանոս աշխարհի վերաց և քրիստոնէութիւնը նրա հոգեոր ժառանդութիւնը դարձնէ, պէտք է որ այդ մեծ նպատակի համար համապատասխան միջոցներ ևս գործադրէր: Այդ միջոցները նոր չպէտք է ձեռք ըերուէնին. նրանք ձեռքի տակ էին և նրանց վերաց ցոյց տուեց Աղեքսանդրիոյ մեծ ուսուցիչը, և ոչ միայն ցոյց տուեց, այլ նրանցով օգտուելու օրինակը ևս տուեց—այդ՝ յունա-հառլմէական աշխարհի քաղաքակրթութիւնն էր ընդհանրապէս և մասնաւորապէս նրա փելիսովիայութիւնը: Անհրաժեշտ էր միայն այդ միջոցների քրիստոնէական վարդապետութեանը յարմարեցնելու այն չափազանցութիւններից ազատուել, որոնցից ազատ չէր նաև Արոգինէոր: Եւ այդ շըջանի եկեղեցւոյ մեծ հայրեւն ու վարդապետները այդ խնդիրը կատարելապէս իւրագործեցին: Նրանց մեծամասնութիւնը կը թուել էր ժամանակի հեթանոս զպրոցներու մ, ուսումնասուիրել էին այնտեղ կլասսիկ գրականութիւնը և փիլիսոփայութիւնը, տերապետում էին ժամանակի քաղաքակրթութեան բոլոր միջոցներին և ընդհանրապէս հին քաղաքակրթութեան բոլոր միւղերին, ուստի և կարող էին քրիստոնէութեանը ծառայեցնել այն բոլոր, ինչ որ նրա համար ամենալաւը, ամենասագնիւը և օգտակարն էր: Նրանց երկասիրութիւնները, առանձնանապէս Բարսեղ մեծի, Գրիգոր Աստուծածաբանի, Գրիգոր Նիւսացու, Ցովհաննէս Ուկեբերանի, Երանելի Թէոդորիափառ ուղղափառ քրիստոնէական վարդապետութեան անոպառելի գանձերով ամէն տեղ երեան են հանում էին գիտութեանց բազմակողմանի հետեւրեր: Մենիսից առաջ այստեղից էին նրանք փոխառնում այն ձեռքի, ուրոնց մէջ ձեւակերպում էին քրիստոնէական վարդապետութեան բովանդակութիւնը, դրա հետակառութեան, բացայացտելու և հաստատելու մեթոդները, արտայայտութիւնները և հասկացողութիւնները, որոնք նրան դիւրըմբանելի էին գարձանում ժամանակակից հաստակութեան ըմբռնողութեան համար, որ ապօռւմ էր յունա-հռովմէական քաղաքակրթութեան մթնոլորդում: Սակայն նրանց համար, որ հաւատա-

բապէս հասկացել էին քրիստոնէսւթեան և յունա-հռովմէական քաղաքակրթութեան էութիւնը, բոլորովին պարզ էր, որ քրիստոնէական Յայտնութիւնը իւս մէջ բովանդակում է կամ Ենթագրում է ձշմարտութիւնների շրջան, որոնք հասկանալի են մոքին և դիւրըմբոնելի բնական գիտակցութեան և սրոնք, գոնեա, մասնաւրապէս լուծումն ստացան հեթանոս փելիքոփայութեան մէջ: ձշմարիտ և ուղիղ, միենոյն ժամանակ քրիստոնէական աշխարհահայեցութեան համաձայն փառաերի այս տարրերը այնքան շատ էին, որ Կղեմէս Աղեքսանդրացու ժամանակից սկսած որոշ կերպով արտայայտում էր և կամ լուսութեամբ Ենթագրում էր հելլենների իմաստութեան վերայ ոյն հայեցքը, ինչպէս կատարեալ գիտութեան համար պատրաստութեամբ վերայ, որ կատարեալ կերպով յայտնուել էր Քրիստոսի մէջ: Քրիստոնէական վարդապեանների աշքում նրանք մէջ արթաներն ունեին, որ վերջինները իրենց հաշիւ չըտալով, նրանց քննումէին իրենց բարձր քրիստոնէական գիտութեան լոյսի մէջ, և այդպիսով իւրացնում էին նրանց քրիստոնէական մտքի տեսակէտով: ձշմարտութեան այս տարրերը, որ ընդհանուր էին քրիստոնէութեան և հելլենական փելիքսոփայութեան, հանդէս են գալիս իրեն ամենալաւ միջոց կլասովիկ կրթութեան և քրիստոնէական կրօնի, յունական գնուինի և եկեղեցական հաւատի մէջ կապ հաստատելու համար: Որքան որ եկեղեցական աստու ածագանութեան ներկայացուցիչները աւելի լիակատար կերպով էին հասկանում իրենց այս ինդիքը, որքան աւելի էր տարածւում սկզբունքների այն շրջանը, որոնց նրանք կապում էին հաւատի վարդապետութեան հետ, այնքան պիտի աւելանար այն տարրերի քանակը, որ նրանք իւրացնում էին յունական փելիքսոփայութիւնից: Որովհետեւ յունական փելիքսոփայութիւնն ինքն այդ ժամանակ շարունակում էր զարգանալ, ուստի և այդ զարգացման ազդեցութիւնը կարելի է նկատել նաև եկեղեցական գրողների մօտ: Ոյն ըոլորը, ինչ որ փոխ առնուեցաւ յունական փելիքսոփայութիւնից եկեղեցական գիտութեան մշտական մասը չգարձաւ, — շատ բան միայն ժամանակաւոր գործադրութիւն գտաւ և ապա ինքն ըստ ինքեան պարզ է կամաց կամաց մոռացուեց: Որքան որ որոշ զարգափար կատարեալ կերպով կարելի էր կտրել այն հողից, որի վերայ նա զարգացել էր, և բաժանել այն երկրորդական մտքերից, որոնք նրա հետ միանալ կարող էին, այնքան աւելի ամուր և սերտ էր նրա կապը քրիստոնէութեան հետ: ընդհակառակը, այն ինչ որ պայմանաւորում էր յունական հոգեսր կեանքի զարգացման որոշ շրջանով, այդ թէւ ժամանակաւորապէս այս կամ այն հաջըռ լուծելու համար ընդունւում էր, սակայն յետոյ բաժանւուց

էր¹: Եկեղեցական գրողների՝ առանձնապէս Կապագովկիայի հայրերի երկերի ուշադիր ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ նրանք հելլենական քաղաքակրթութեան տարրերի իւրացուցմամբ չեին սահմանափակում և հաստատութիւն գտած ձեւերի առաջ անպայման գլուխ չեին խոնարհում: Նրանք զգում և գիտակցում էին, որ հին ընազանցական և հոգեբանական ընդհանուր գծերը խիստ նեղ են քրիստոնէական գաղափարների համար, և այդ ստիլեց նրանց փորձեր անել փիլիքոփայական տերմինուգիտիան դարգացնելու քրիստոնէական վարդապետութեան բովանդակութեան էական տարբերութիւնների համաւայն: Յետագոյ ժամանակի յոյները պարզապէս խոստվանում էին, որ քրիստոնէական աստուածաբանութիւնը հին հասկացողութեանց մէջ առաջ բերեց նոր կրթութիւն: Ս. Յովհաննէս Գաւմասկացին եւր «Գիտութեան աղքեւրի» մէջ առաջին գիւբը նույն ցիլիքոփայական ոկզեռնքների բացատրութեանց: Նա պարզապէս ցոյց է տալիս, որ իւր հայեցակէտով, դաւանաբանական ձեւերը կազմուել են փիլիքոփայութեան օգնութեամբ, բայց միւնին ժամանակ առաջ է տանում նաև աստուածաբանական և փիլիքոփայական բանաձերի տարբերութիւնը: Ուշ տեղ հարկաւոր է, նա նկատողութիւն է անում, որ ս. հայւերը, այլ կերպ էին որոշում ըստաձեւերը, քան թէ ոչ քրիստոնէայ փիլիքոփաները²: Այս ճանտապարհով միայն եկեղեցական հաւատի բովանդակութիւնը արտայայտուեց այնպիսի լեզուով, որ մտաշելի էր բոլոր կրթուածների համար: Յունական փիլիքոփայութիւնը հանդէս եկաւ իրու այն ձեւը, որի մէջ պահպանւում էր և արտայայտուած էր եկեղեցական անձնուեր հաւատի գանձը: Եթէ վերջինին այդ ժամանակ նոր ձեւ տրուեց, զբանով նրա մէջ օտար բովանդակութիւն չմուտքուեց: Եկեղեցական գաւանաբանութեան վերայ հելլենական փիլիքոփայութեան անհերքելի ազդեցութիւնը չպէտք է չափազանցացնել: Վերջաբանում մենք տեսնում ենք ոչ թէ «քրիստոնէութեան հելլենիզմի վոխուելը, այլ ընդհակառակը, հելլենիզմի քրիստոնէութեան փոխուելը: Փիլիքոփայութեան ընազանցական գաղափարները, որ ընդունւում էին քրիստոնէական եկեղեցւոյ մէջ, այստեղ վերածնութեան աւելի բարձր ու հոգեսր

1. Prof. Freih. v. Hertling. Christentum und Griechische Philosophie (v. Akten des fünften internationalen Kongresses katholischer Gelehrten zu München von 24 bis 28 September 1900), München 1901, S. 72, 74.

2. Prof. K. Holl. Amphirochius von Ikonium, S. 3—4.

գաղափար էին դառնում, և ինչպէս կեանքի ուրիշ շրջաններում, այնպէս էլ այստեղ վիլխովիայութեան սահմանում շրջաստոնէութեան կրօնը քաղեց բոլոր թարմ հիւթերը, վերակազմեց նրանց իւր ոգու համեմատ և իւրացբեց, որպէս իւր սեպհականութիւն»¹:

Աթէ այս աստծներին աւելացնենք, որ այդ շրջանի եկեղեցական դրոշները, իրենց գիտական և վիլխովիայական կը թութեամբ և ուղղութեամբ, կարողացան բարձր կանգնել հեթանոս վիլխովիայութիւնից և օգտուել հին գրականութեամբ հեթանոսական իմաստութիւնը և հերետիկոսութիւնը մերժելու, մաքուր ուղղափառ վարդապետութիւնը բացատրելու և հաստատելու համար, պարզապէս սահմանափակում էին բանականութեան անկախ հետախուզութիւնները և թոյլ չէին տալիս հասկանալ կամ տրամաբանական երկախօսական եղանակով պարզել հէնց հիմունքները, և բանականութեան բնական դուծունէութիւնը ենթարկեցին աստուածային Յայտնութեան և եկեղեցւոյ վարդապետութեանը, այն ժամանակ մնը համար պարզ կլինի, թէ ինչու նրանք ընդունակ էին այսպիսի քրիստոնէական եկեղեցական աշխարհահայեցողութիւն ստեղծելու, որի մէջ բանականութիւնը և հաւտար միացած էին կենդանի միութեամբ և ներդաշնակութեամբ: Խսկապէս նրանք աշբայտական ճանապարհ ցոյց առին, որով եկեղեցական աստուածաբանական գիտութիւնը եկեղեցուն արգելուաւոր կերպով ծառայելուն համար պէտք է գնար: Մի հայեացք ձգելով Դ. և Ե. դարերի դաւանաբանական շարժումների ընթացքի և զարդացման վերայ, և գնահատելով աստուածաբանական գիտութեան ելքակացութիւնները, գուռար չէ կարծել, որ եթէ քրիստոնէութեան միտքը գնարայն բանական ճանապարհով, դէպի որը նրան հրում էր արիստականութիւնը, այն ժամանակ քրիստոնէութիւնը ինչպէս կրօն կը դադարէր գոյութիւն ունենալուց: Բայց միւս կողմէց, եթէ քրիստոնէութիւնը մնար այն գրութեան մէջ, որի մէջ նրան աստուածաբանների պահպանողական խումբը պահում էր, այն ժամանակ եկեղեցին կը մնար մինչեւ նիկիական հանգանակն եւ զած անրոշ ձևերով, որ ծայրակեղ բազմատեսակութեան և հասկացողութեանց մէջ քրիստոնէական կրօնի հիմնական հարցերի համար շփոթութեան լայն ասպարէզ բաց արաւ:

1. Проф. А. А. Сиасский, История догматическихъ движений въ эпоху вселенскихъ соборовъ (въ связи съ философскими учениями того времени), т. I. Сергіевъ Посадъ 1906 г. стр. 650—651.

Դ. և Ե. դարերի աստուածաբանական դիտութեան մի այլ աձքի ընկնող յատկութեւնը նրա թափանցող կենդանի ոգինէ: Գրա աղբեւրը ամենից առաջ այդ ժամանակ եկեղեցական գրողների կրօնական գիտակցութեան կենդանութեան մէջ պէտք է վնասէլ: Կրօնական խիստ զգացմունքը նրանց ամբողջ կեանքին տոն էր տալիս և արտացոլում էր նրա բոլոր երեսոյթների մէջ: Այդ զգացմունքը թափանցում է նաև նրանց ամբողջ աստուածաբանական—գրականական գործունէութիւնը, որ առաջնորդում էր, որ ոգերուում էր ոչ թէ ձեւական գիտական ներով, այլ գլխաւորապէս կրօնական շահագրգութեամբ: Անվերջ և կարծէք մանր քննագատութիւնները և բանաձեւերի, լոկ միայն խօտայի (նշանալսեց) մասին վեճները նրանց համար բարձր կրօնական նշանակութիւն ունէին: Որդւոյ Աստուածութեան, մարմնացման և Քրիստոսի մէջ երկու բնութեանց միացման հարցերի մէջ, գործը հաւատացեալի հոգու մասին էր լինում—նրա վիլկութեան անմահութեան և յարկութեան հնարաւութեանն էր վերաբերում: Կրօնական այս խորին զգացմունքն նրանց համար եռանդի աղբեւր էր ծանր կոռուի մէջ և աստուածաբանական—գիտական գործունէութեան ճշմարիտ յայտանշն միջոցների որոշման մէջ: Այս գիտակցութիւնը պահպանում էր ճանաչողութեան շրջանը ընդարձակութիւց ընտկան մարդկային բանականութեամբ մինչեւ անուահմանութիւնը և առաջ ըերսում նրան յատուկ յարգանք զէպի աստուածային Յայտնութեան անհասանելի գաղտնիքները, այլ և նա ստիպում էր նրանց ուշագրութեամբ լսել «հասարակ հաւատի» ձայնին, զգուշութեամբ, իւրաքանչիւր քայլը կշռելով, տռաջ գնալնրան բացատրելու և պարզ, քրիստոնէական խելացի տեսչութեան աստիճանի վերաբանութեամբ բարձր բարձրացնելու համար:

Միւս կողմից, այդ շրջանի աստուածաբանական գիտութեան աշխատանքի կենսուական էներգիայի զարդացման համար հաճելի և անհամեշտ պայմանն էր կենդանի և ազատ մաքի թարմ մթնոլորդը, ոչ անստիճան ի հարիէ, սակայն այսպիսի մթնոլորդ, որ աստուածաբանական ստեղծագործութեանը օրինական ընդարձակութիւն էր ապահովում: Հաւատի պահպանութեան և աղաւածումներից պաշտպանելու համար, որտեղ վերին աստիճանի աստուածաբանական գիտութեան նախանձախնդիր ներկայացուցիչները, պահանջում էին համաձայնութիւն եկեղեցական վարդապետութեան հետ միայն էական սկզբունքների մէջ: Միւս մնացածի մէջ կատարեալ ազատութիւն տալով, միանգամայն համբերութեամբ էին վերաբերում աստուածաբանական կարծիքներին, երբ զրանք

արտայայտում էին ոչ թէ հաւատի անպայման թեզիսների ձեռվ, այլ ենթագրութիւնների, որոնք ձգտում էին հասկանալ և բացատրել եկեղեցւոյ ճշմարտութիւնը: Այստեղ կարելի է նաև և առաջ ցոյց տալ ո. Աթանասին, որ գիտութեան և նրա ազատ զարդացմանը յարգանք է ցոյց տալիս. այդ մասին ապացոյց են նրա դատողութիւնները Որոգինէսի, Դիտոնիսիոս Աղէքսանզրացու, Թէոդոսոսի մատին, իսկ նրա գէպի ուրբէշներն ունեցած համբերատար յարաբերութեան մասին, նոյն իսկ պարզապես սխալ կարծիքների, բաւականաչափ վկայում են Մարկեզոսի մասին եղած նրա դատողութեան ընաւորութիւնը, արգէն այն ժամանակ, երբ նա շատ շատերի մէջ արդար կառկածներ էր յարուցանում: Կիպրոսի ո. Եպիփանը հաղորդում է. «Մի ժամանակ լինը հարցնում էի երանելի պապ Աթանասին, թէ նա ի՞նչ կարծիք ունի այդ Մարկեզոսի մասին. Նա ոչ պաշտպանում էր նրան և ոչ թշնամաբար էր վերաբերում, բայց, ժամանով, ժամանուկ առաջ, որ նա մոլորութեան մէջ շատ հեռու չըգնաց և նրան արգար էր համարում»¹: Անկիւրիայի Բարոնզի մասին, որ ընդունում էր «համանմանութիւնը» և մերժում «համագոյութիւն» բանաձեռ, ո. Աթանասին ասում է. «Այն բոլորի հետ, ուրոնք ընդունում են միայն Նիկիայում գրածները, երկմտում են միայն «համագոյութիւն» արտասանութեան մէջ, ուստի հարկաւոր է նրանց հետ վարուել ոչ թէ ինչպէս թշնամիների հետ: Մենք նրանց դէմ չենք բաղոքում, ինչպէս արիստականների և ընդգիւմագուզ հայրերի (Նիկիական) դէմ, այլ մտածում ենք ինչպէս եղբայր հետ, որ մեզ հետ համամիտ է, և միայն անուանելու մէջ է երկմտում»²: Եւ Աղէքսանդրիոյ 362թ. ժողովում, ո. Աթանասի առաջնորդութեամբ, վճիռներ եղան գէպի տարբեր մտածուները սիրով և ողորմածութեամբ լիւ Ս. Գրիգոր Աստուածաբանը, թէպէտ ինքը եռանդուն կերպով պահպանում և ապացուցանում էր Ս. Հոգւոյ Աստուածութիւնը, սակայն այդ ճշմարտութեան խոստովանութիւնը չէր պահանջում այն քիստոնեաներից, որոնք, լրջօրէն մտածելով Որդւոյ մասին և չըհամարձակուելով ա. Հոգւուն ստեղծուած արարածների շարքը դասել, այնուամենայնիւ հրաժարում էին նրան Աստուած ընդունելուց: Նա համարում է նրանց կատարեալ աշխատութեամբ կամ աշխատութեամբ կամ աշխատութեամբ կամ աշխատութեամբ:

^{1.} Ереси. „72, 4: русск. пер., ч. 4. стр. 282—283.

^{2.} О соборахъ, 41: русск. пер. изд. 1903 ч. 3. стр. 146.

Ճրեալին. Նա զիմում է նըանց այսպիսի խօսքերով. «մի անանը հոգեպէս, և լինենք աւելի եղբայրասէս, քան ինքնասէր: ձանաչեցէք աստուածային ոյժը և մենք ձեզ խօսքերի մէջ զեջումն կանենք: Խոստովանեցէք ընութիւնը ուրիշ անուան տակ, որն աւելի յարգում էք, և մենք, կը ժշկենք ձեզ, ինչպէս թոյլերին, նոյն իսկ երբեմն շատ բան ծածկելով ձեր բաւականութեան համար»: Յետոյ շարունակում է. «Աւելի պարզ և կարծ կասեմ. ոչ զուք մեղադրեցէք մեզ բարձր խօսքերի համար, և ոչ մենք մեղադրենք այն արտայայտութեան համար, որ ձեզ որոշ ժամանակ անհրաժեշտ է, մինչև որ մեզ հետ չընանէք, թէպէտ ուրիշ ճանապարհով, մինոյն ապաստարանը: Մենք յաղթութեան չենք ձգտում, այլ եղբայրների վերադարձին, որոնց մէջ մի քիչ կեանք ենք գտնում, որոնք Որդւոյ մատին իւելացի են մտածում: Ս. Բարսեղ մեծի հաշտեցուցիչ դործունէութիւնը, որ իրագործում էր նա Գրիգոր Աստուածապանի և Գրիգոր Նիւսացու օգնութեամբ, գէպի ուրիշների գատաղութիւններն ու կարծիքները ամենագգոյշ յարաբերութիւնն է ցոյց տալիս: Այս յարգանքի և մաքի ու հետախուզութեան ազատութեան մէջ է եկեղեցական հայրերի, նախաճայրերի համոգումն, որ քրիստոնէութիւնը մարդերեն այնպէս չափաք է ներկայացնի, որպէս թէ նրա թէօրէտիկ կողմը ըոլոր կետերի մէջ ընդմիշտ անշարժութեան է մատնուած, որ բացատում է յետագայում նրա հասկանալու և բացարեկու կարիքը: Նրանք թոյլատրում էին արածայնութեանց և վէճերի կարելիութիւնը քրիստոնէական աստուածաբանների մտի քանի հարցերի մութի լինելու պատճառով և ցոյց են տալիս նոյն իսկ քրիստոնէական լրիւ աշխարհայնացնութեան չինութեան մէջ օրինակների տարբերութիւններ: Նրանք հաւատում էին տասու ածաբանական դիտութեան յառաջազիմութեանը և ցանկանում էին նրան, որովհետ այդ անհրաժեշտ էին համարում: Ս. Գրիգոր Աստուածաբանը ո. Հոգւոյ մատին խօսքի մէջ բացարեկով թէ ինչու ո. Հոգւոյ Աստուածութեան մատին վարդապետութիւնը մթանդամայն պարզ և որոշ չարտայայտուեց, ասում է. «անհրաժեշտ է որ Նվորդութեան լոյսը լուսուարութեալներին յաջորդական յաւելումներով»: բարձրացումներով մի վառքից միւսը և յաջորդութեամբ: Տեսնում ես հետգիւտէ մեղ վայրով լուսաւորութիւնը և աստուածաբանութեան այն կարգը, որը մեղ էլ հարկաւոր է պահպանել, ոչ բոլոր յանկարծ արտայայտելով և ոչ բոլոր մինչեւ վերջը ծածկելով»¹:

^{1.} Слово. 31: русск. пер. ч. III. стр. 126—127.

Գաւառնաքանական շարժումների ամբողջ ընթացքը քննելի շրջանում այգպեսի յառաջազեմութիւն է ցոյց տալիս: IV-րդ գարի առաջին քառորդի ին աստուածաբանական դորժիչները, ո. Աթանասի գլխաւորութեամբ, որոշումն էն գաղափարները և մշակում վարդապետութիւնը, իսկ նոյն գարի երկրորդ կէսին—Կապադովիկայի հայրերը, Գիղիսոս, Ամթելոքէս—վերջնականապէս հաստատում են տերմինութիւններին: Ս. Աթանասի երրորդութեան վարդապետութիւնը, որ անկարելիութիւն էր ներկայացնում ինչպէս տերմինութիւնը մէջ այնպէս էլ Աստուածային անձանց և նրանց յարաբերութեան թէրիայի մէջ, բացայացառուեց, լրացրուեց և աւելի որոշուեց Կապադովիկայի հայրերի ձեռքով: Միւնոյն ժամանակ Վ-րդ գարի վերջի աստուածաբանները, որ այնքան եռանդուն կերպով ոտի կանգնեցին Ապողինարիոսի վարդապետութեան դէմ, յենուելով աւանդաբար ստացած եկեղեցական վարդապետութեան և իւր ընդհանրական հուատի գիտակցութեան վերայ, այսուամենայնիւ քիսուաստանական խնդիրների վերջնական և անպայման գոհացուցիչ վճիռ չներկայացրին, որը հետզիւետէ կատարեցին V և VI գարերի աստուածաբանները: Դրոջների մի մասի սիալ կարծիքները կամ անձառութիւնները առաջ էին բերում ուրիշների կողմից բացատրութիւններ, և այդպիսով հուատի մշաբատութիւնները եկեղեցական գիտակցութեան մէջ անցնում էին պակաս պարզութիւնից և որոշութիւնից աւելի բարձրին և ընդունում էին այնպիսի ձեռաւորութիւն, որ նրանց ըովանդակութեանը աւելի ճիշտ արտայայտութիւն էր տալիս և պահպանում էր ապագայի աղաւազումներից և կրկնութիւններից:

Վերջապէս աստուածաբանական մտքի կենսունակութիւնը, նրա լարուածութիւնը և եռանդուն գործունէութիւնը պայմանաւորւում էին և նրանով, որ այդ շրջանի գրողները հնարաւորութիւն ունեին՝ նույնդէս գալու և իրօք մեր առաջ հանդիսանում են իրենց պարզ արտայայտուած անձնաւորութեամբ իւրաքանչիւրի հոգնոր ձիքերի չափով: Աստուածաբանական մաքը մէջ մեր նկատած հոսանքները ցոյց են տալիս, որ այդ շրջանի աստուածաբանները, եռանդուն կերպով աշխատելով յօդուա եկեղեցւոյ թէ խօսքով և թէ գրութիւններով, մտածում էին իրենց ժամանակի ձեւերի և տեսութիւնների համեմատ, գոնեա նրանցից աշղանդաւորները առանձին տեսակէտով գնահատում էին և գործ գնում իրենց նախորդների գործունէութեան եղբակացութիւնները և զանազան դպրոցների

աստուածաբանական աւանդութիւնները, և հաստատում էին ժամանակակից եկեղեցական կեանքի, կըօնական բարոյական պահանջների և հարցերի նկատմամբ իրենց սեպհական հասկացողութիւնը: Եւ քրիստոնէական մտքի ձեւերի այս տարբերութիւնը, ոչ միայն նրա միակ ճշմարտութեանը հասնելուն չէր լինասում, այլ անպայման օգնում էր նրան:

Այս շըջանի եկեղեցական գրողների ամբողջ գրական աստուածաբանական գործունէութիւնը իւր տարբեր ուղղութիւններով, նրբութիւններով, տարբեր հայեացքներով և ամբողջ եւանդով նուերաբերուած էր եկեղեցւոյ ծառայութեան, անձնական շահը միանում էր եկեղեցականի հետ, և աստուածաբանական գիտութեան ներկայացուցէները ոչ միայն գրական ճանապարհով էին կռւում ճշմարտութեան թշնամիների հետ, այլ և պատրաստ էին եկեղեցւոյ գործի համար տանել ամէն տեսակ աղէտներ: Այդ նրանց սեպհական գործն էր, նրանց կեանքի գործն էր: Սակայն եկեղեցին էլ աստուածաբանական գիտութիւնից չէր խորթանում, նրան իրան օտար չէր համարում: Հոգեգորականների միջից ահագին շարք փառաւոր ներկայացուցիչներ և առաջնորդներ տալով թէ արհեստական ճանապարհով և թէ ստիպողական կերպով նրա գործունէութեան շըջանները չէր սահմանափակում: Եկեղեցական բոլոր հարցերը միննոյն ժամանակ աստուածաբանական գիտութեան հարցեր էին: Նրա ամէն մի ներկայացուցիչ իրեն իրաւունքն էր համարում զրանց լուծման մէջ մասնակցել, ուստի և գիտակցում էր պատասխանաւորութեան այն ամբողջ ժանրութիւնը, որ իւր վերցնում ամէն անդամ, երբ հանդէս էր գալիս: Աւոտի և աստուածաբանական գիտութեան ոկլուսնքները անմիջապէս ստանում էին և եկեղեցական նշանակութիւն, և աստուածաբանական գիտութիւնների առաջական առաջականութիւնը պարագանութեան ուղղութեան համար և ուղղակի աղգում էր ընդհանուր պարագանութեան ուղղուցիչ հաստատելի եկեղեցական վարդապետութեան վերայ: Այսպիսի պայմանների մէջ աստուածաբանական մտքի զօրեղ աշխատանքից յետոյ ոչ միայն բազմաթիւ, խորին յարգանաց արժանի բովանդակութեամբ աստուածաբանական գիտութեան զանազան շըջաններում առանձին գրողների երկեր երկեան եկան, այլ և հոգ պատրաստուեց իրենց համառօտութեամբ տիեզերական ժողովների այն բարձր հաւատորոշումների համար, որնցով հաստատած է քրիստոնէութեան ընդհանուր եկեղեցական հասկացութիւնը: Նրանց մէջ իւրաքանչիւր հասկացողութիւնների լինասում անդամական գիտական գաղափարների համար և գործունէութեան եղբակացութիւնը: Եւ քրաքանչիւր քանածեք և գնահատած է իւր օգտակարութեան նկատմամբ եկեղեցական վար-

դապետութեան՝ այն է աստուածաբանական գիտութեամբ
ուղղղ կերպով արտայայտելու համար;

Եկեղեցական աստուածաբանական գիտութեամբ ոչ մի
շրջան չէ ունեցել, որը մաքի ընդարձակութեամբ և վսեմու-
թեամբ, բովանդակութեան խորութեամբ, դադափարական
հարստութեամբ և տեսութեաների բազմազանութեամբ աստ-
ուածաբանական ստեղծագործութեան եռանգով կարողանար
հաւատարուել այն բանին, ինչ որ նա ԱՎ և V գարերում անց-
կացրեց նրա պատմութեան մէջ այս ժամանակը ներկայացնում
է այն շրջանը, որ թողել է անջնջելի հետքեր, և նրա աստ-
ուածաբանական դպրութեամբ ճշմարտապէս հանդէս է գալիս
երբե իդէալ եկեղեցական աստուածաբանական գիտութեան։
Այդ շրջանին յաջորդող եկեղեցւոյ աստուածաբաների բոլոր
ոերունդները կանգնում են նրա առաջ յարգանքով լի զար-
մանքով, եկեղեցւոյ վարդապետների և մեծ հայրերի երկերի
մանրազնին ուսումնասիրութեամբ իրենց սուրբ պարտակա-
նութեանն են համարում, նրանց հարուստ գանձարանից վեր-
ցնում են խրանեց ճշմարտի հաւատի քրիստոնէական ուղիղ
կեանքի համար։ Սակայն աստուածաբանական գիտութեամբ,
ինչպէս և առհասարակ, զբանով սահմանափակուել չի կարող։
Նա պէտք է ձգտէ դէմի աստուածաբանական գիտութեան այն
իդէալը, որ նրա ոսկէ գարում այդքան պարզ կերպով երեան
եկաւ, իրականացնել ներկայումս, միայն ոչ թէ հասարակնմանու-
թեան վարդապետութեան հանապարհով, այլ կենդանի ստեղծա-
գործող գործունելութեան միջոցով։ Եթէ եկեղեցւոյ առաջ մեծ
խնդիր է գրուած ժողովութեամբ հոգեոր կեանքի մէջ իրեն
հաստատելու, և եթէ քաղաքակիրթ աշխարհում նա այդ կարող
է իրականացնել միայն աստուածաբանական գիտութեան մի-
ջոցով, այն ժամանակ վերջնը պէտք է միշտ յառաջադիմէ։
Ամենաբարձր նպատակը, որին նա ձգտում է — հնարաւոր եղա-
ծին չափ ճշմարտութեան կատարեալ բանական արտայայտու-
թեան է։ Բայց եթէ եկեղեցւոյ գաւանաբանութեամբ և նրա բա-
րոյական վարդապետութեամբ անփոփոխ են, միշտ համանման
են, որովհետեւ իրենց էութեամբ աստուածային են, ուստի և
նրանց իւրացումն ու ըմբռնումն հետզհետէ պէտք է զարդա-
նայ, կատարեալագործութեան համնի ինչպէս իւրաքանչիւր ան-
դամի գիտակցութեան՝ այնպէս էլ եկեղեցւոյ մէջ։ Ակամայից
այստեղ յիշում է մարդ Վեհենակոս լիբինոկու աստուածաբա-
նութեան մէջ հետաքրքրի մտածմունքների յառաջադիմութեան

մասին։ «Գուցէ որ և է մէկն ասի, — գրում է նա, — ուրեմն,
Քըստոսի եկեղեցւոյ մէջ ոչ մի բարդաւաճումն չպէտք է լի-
նի։ Ի հարկ է պէտք է լինի և շատ մեծ... սակայն այնպէս,
որ բարդաւաճումն ճշմարտապէս հաւատի բարդաւաճումն
լինի և ոչ թէ փոփոխութեան... թող աճեն և ամենալաւ կեր-
պով բարդաւաճեն տարիներով, գարերով հասկացողութեանը,
կառավարութեանը, Եմաստութեանը թէ իւրաքանչիւրինը ա-
ռանձին առանձին և թէ բոլորինը, ամէն մէկ մարդու, ինչպէս
և ամբողջ եկեղեցունը, միայն իրենց ձևով, այսինքն միենոյն
վարդապետութեան մէջ, միենոյն մտքի, միենոյն հասկացողու-
թեան մէջ»։ Ցոյց տալով մարդկային մարմնի օրգանական զար-
գացման ընթացքը, Վեհենտիսուը շարունակում է։ «Միենոյն
բարդաւաճման օրէնքներին պէտք է հետևի և քրիստոնէա-
կան կրօնը, այն է, թող նա տարիների ընթացքում հաստա-
ռի, ժամանակի հետ լայնանայ, գարերի հետ բարձրանայ։ ուա-
կայն թող մնայ անդարար և անվնաս»¹։ Աստուածային յայտ-
նութեան խորութեանն անսպառ է և մարդկութեամբ իւր զար-
գացման իւրաքանչիւր աստիճանի վերայ նրա ճշմարտութեան-
ները ըմբռնում է տեսութեան նոր հանդոյցի և նոր լուսաւո-
թեան տակ։ Այս հասկացողութեան արտայայտութեամբ ընա-
կանաբար պէտք է տարբեր լինի, պէտք է համապատասխան
լինի ժամանակին, գիտութեան ընդհանուր զրութեանը, հո-
գեոր և բարոյական փորձին, անհատական հանդամանքներին
և կարիքներին։ Իւրաքանչիւր նոր գարի պահանջներին համա-
պատասխան լինելը կարելի է ընդունել ինչպէս ապացոյց աստ-
ուածաբանական գիտութեան առողջ զրութեան, իսկ եթէ այդ
նշանը չըկայ, այն ժամանակ կարելի է կասկածել հիւանդու-
թեան, ընդհարման և կամ նոյն իսկ նրա օրգանական աճման
անկման մասին։ Աստուածաբանական գիտութեամբ, որպէս զի
իւր խիստ բարձրութեան վերայ կանգնած լինի, պէտք է ան-
ընդհատ իւր հայեցակէտերը և փաստերը վերանորոգէ և կատա-
րելագործէ, որպէս զի առաւել լաւ ապացուցէ, առելի լաւ
բացատրէ եկեղեցական վարդապետութեամբ, նրան աւելի լաւ
հասկացողութեան հասցնի։ Ահա այն պահանջները, որ ժագում
են հէնց աստուածաբանական գիտութեան էութեանից և նրա
նպատակներից։ Սակայն ի՞նչ միջոցներով և ինչպիսի հանդա-
մանքներում նա կարող է իրագործել այդ ինդիքը։ Եկեղեցւոյ
հայրերը և վարդապետները ոչ թէ տեսականապէս, այլ հէնց
իրենց երկասիրութեաններով և իրենց աստուածաբանութեան

ընաւորութեամբ ցոյց տուին թէ լինչպէս պէտք է լինին տուածաբանական գիտութեան ոկզունքները, որոնց վերայ և ուղղափառ եկեղեցւոյ հոգով հաստատում է աստուածաբանական գիտութեան անընդհատ յառաջադիմութիւնը: Քըստոնէական ճշմարտութիւնը ճանաչելու և բացայայտելու համար աստուածաբանական միտքը պէտք է ծագէ հէնց Յայտնութիւնից և աստուածաբանական եկեղեցական գիտութիւն կառուցանէ: Ա. Գիրքը, եկեղեցւոյ մէջ պահպանուած առաքելական աւանդութիւնը և եկեղեցական հաւատագիտակցութիւնը իրենց միութեան ամբողջութեան և փոխադարձ յարաբերութեան մէջ պէտք է քրիստոնէական գիտութեան համար հիմք, ազգի և անփոփոխ յայտանշան լինին և աստուածաբանական գիտութեանը այնպիսի առաջադիմութիւն ապահովէն, որ հաւատոյ բարդաւաճումն լինի և ոչ թէ նրա փոփոխութիւնը: Աստուածաբանական գիտութիւնը հաւատով կենդանացած և ոգի առած, իւր գիտական ձգտումները վերացականացնում է կրօնական բարձր հետաքրքրութիւնով: Այդ նպատակներին ծառայելու համար և առաւել լաւ իրականացնելու համար նա պէտք է ժամանակակից քաղաքակրթութեան հոգու մէջ թափանցէ, նրանից ամենալաւ տարբերը վերցնէ, և յարմարեցնէ եկեղեցական վարդապետութեան հոգուն և ընաւորութեանը. բոլոր քաղաքակրթական գիտական միջոցներով օգտուի, որպէս զի Աստուծով յայտնուած ճշմարտութիւնների հասկացողութեան մէջ աւելի խորը թափանցէ, մանրազնին կերպով ըմբռնէ նրանց ներքին կապը, հնարաւոր եղածին չափ գտնէ նրանց համար աւելի հաստատուն փառագույն եկեղեցական ամբողջ աշխարհայեցողութիւն, որ հոգեառ զարգացման որոշ աստիճանի վերայ գտնուող մարդկութեան հասկացողութեան և ըմբռնողութեան համար մատչելի լինի:

Սակայն զրա համար ստեղծագործութիւն է հարգաւ որ առանց ստեղծագործութեան աստուածաբանական գիտութիւնը չի կարող լինել կենսունակ և արդիւնաւոր: Խսկ ստեղծագործութիւնը անկարելի է եթէ աստուածաբանական գիտութեանը, իւր ազգի լիները սրոշած սահմաններում քննելու և հետախուզելու ազատութիւն չը արուի: Եթէ գէպի ճշմարտութիւնը տանող ճանապարհը այնքան նեղանում է, որ նոյն իսկ փորձուածները կարող են նրանով շարունակ երկիւղով անցնել, այն ժամանակ անհնարին է մտածել աստուածաբանական գիտութեան կենսունակութեան մասին և նրանից ստեղծագործութիւն սպասել. հետախուզութեան երկիւղը բնականաբար ճնում է անտարբեր յարաբերութիւն գէպի ճշմարտութիւնը

նոյն իսկ եկեղեցւոյ հաւատի քարոզելի սկզբունքների պատկառելի պայմանների տակ Պարզ կերպով այդ հաստատուում է հինգեւեկեցական աստուածաբանական գիտութեան արագանկումով, եկեղեցական հասարակութեան մէջ միայն տիրապետում էր միակողմանի աւանդական ուղղութիւնը, որ պատկառելի յարգանքով կապում էր ստացած ժառանգութեան և հնութեան հեղինակաւորութեան հետ անփառահ յարաբերութիւն գէպի ամէն բան, որը ինքնուրսին կենդանի մտքի նշան էր:


Եկեղեցին իրաւունք ունի աստուածաբանական գիտութիւնից պահանջելու, որպէսզի նա ամբողջովին իւր ծառալութեան նոււիրի իրեն և իւր եկեղեցական գիտութեան ընաւորութիւնը աչքից չըթողնի: Սակայն որպէսզի աստուածաբանական գիտութիւնը յաջող գործունէութիւն ցոյց տայ, վերջինս գէպի եկեղեցական գիտութիւնը փաստացի յարաբերութեամբ ունեցած անսասան համոզմունքի համար հաստատուն հող պէտք է ունենայ, որ նրա գոյութիւնը և խաղաղ բազմակողմանի զարգացումը՝ լինչպէս գիտութեան, ճանաչուում է յատկապէս եկեղեցւոյ խնդիրներից ծագած և անպայման անհամեցած եկեղեցւոյ կեանքը ամէն կողմից և նրա մէջ ծագող հարցերը լուսաւորելու համար: Այդ ժամանակ աստուածաբանական գիտութեան համար եկեղեցական—պարտականութեանց հետ միասին առաջ կըգայ և նրա իրաւունքը եկեղեցւոյ մէջ, որի գիտակցելու մէջ նա կզգայ և իւր պատախանատւութեան մի մասը, որպէսզի ժամանակակից հաստակութեան մէջ եկեղեցին իւր առաքելութիւնը երագործէլ կարողանայ:





3283





3180